

ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ

1

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱԾԽԱՏՈՂՆԵՐԻ  
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ



THE UNIVERSITY OF CHICAGO  
PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS



THE UNIVERSITY OF CHICAGO PRESS

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ ИСТОРИИ

# ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

СБОРНИК СТАТЕЙ  
МОЛОДЫХ НАУЧНЫХ СОТРУДНИКОВ

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ЕРЕВАН

1997


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

A II  
84641



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
պատմական գիտությունների դոկտոր Վ. Ն. ՂԱԶԱՆԵՅՅԱՆ

Ժողովածուն հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝  
պատմական գիտությունների դոկտոր Հ.Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ,  
պատմական գիտությունների թեկնածու Ռ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Հ 282      Հայոց պատմության հարցեր (Երիտասարդ  
գիտաշխ. հոդ. ժող.) ՀՀ ԳԱԱ—Եր., ՀՀ «Գիտու-  
թյուն» հրատ., 1997 թ., 122 էջ:

Հոդվածների ժողովածուի մեջ արխիվային, մամուլի և  
հրատարակված գրականության հարուստ նյութերի հիման  
վրա ուսումնասիրվել և վեր են հանվել հայոց պատմության  
մի շարք հարցեր:

Ժողովածուն հասցեագրվում է պատմաբաններին և հա-  
յոց պատմությամբ հետաքրքրվողներին:

ԳՄԴ 63 . 3 (2 Հ)

## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

22 գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը պարբերաբար կազմակերպում է երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական նստաշրջաններ:

Առ այսօր հրատարակվել են 25 նստաշրջանների զեկուցումների թեզիսներ, որոնք հանդիսացել են ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներից շատերի առաջին ֆայլերը գիտության մեջ: Երիտասարդների գիտական գործունեության հետագա խրախուսման նպատակով նստաշրջանների հրավիրման, թեզիսների տպագրության հետ մեկտեղ, ինստիտուտը նախատեսում է առանձին զբոսայգիներով, հողվածների ժողովածուներով հրատարակել աշխատությունների շարք: Ներկա ժողովածուն այդ շարքի առաջին զբոսայգին է, որում տեղ են գտել հայոց պատմության տարբեր հիմնահարցերին վերաբերող հետազոտական հոդվածներ, որոնք նախապես լինարկվել և հրատարակության են երաշխավորվել ինստիտուտի համապատասխան բաժինների կողմից:



ԱՐՄԵՆ ՔԵՇԻՇՅԱՆ

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մամիկոնյան տոհմի ծագման խնդրին հատուկ քննությամբ կամ հպանցիկ անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, որոնք հիմնականում հանգել են այն եզրակացության, որ Մամիկոնյանները եկվոր են, ունեն օտար, ճենական ծագում: Իբրև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ավանդության համաձայն Մամիկոնյանների նախնիները Հայաստան են եկել Ճենաստանից՝ հետազոտողները Մամիկոնյանների ծագումը պարզելու համար հիմնականում բավարարվել են Ճենաստանի աշխարհագրական տեղորոշումով: Այդպիսով Մամիկոնյանների ծագման խնդիրը սխալ կերպով նույնացվել է Ճենաստանի տեղորոշման խնդրին<sup>1</sup> և, կապված Ճենաստանի տեղի և ճենների էթնիկական պատկանելիության որոշումից, Մամիկոնյաններին վերագրել են շինական, միջինասիական, քաշմիրյան, թյուրքական և այլ ծագումներ: Առանձին դեպքերում, երբ կասկածի տակ է առնվել ճենական ծագումը, Մամիկոնյաններին վերագրել են իրանական կամ ճանական (խաղտիք) ծագում<sup>2</sup>: Մի կողմ

1 Այնպես է ստացվում, որ եթև մենք շիմանայինք, ասենք, Հրեաստանի կամ Ասորեստանի տեղը, ապա, հետևելով ավանդությանը, Բագրատունիների կամ Արծրունիների ծագումը որոշելու համար պետք է հիմնականում բավարարվենք տվյալ երկրների տեղադրումը որոնելով:

2 Մամիկոնյանների ծագման մասին բաղմամբիվ հետազոտություններից նշենք հիմնականները. Աճաճիկեան Մ. Յ., Ս. Գիրքը և Մամիկո-

թողնելով հետազոտողների հիշյալ տեսակետները, ինչպես նաև ձեռնաստանի տեղորոշման խնդիրը՝ անդրադառնանք Մամիկոնյանների ծագումը լուսաբանող որոշ հարցերի:

Նախ կարևոր է պարզել, թե Մամիկոնյանների ծագման ավանդույթունը որքանով է համապատասխանում իրականությանը: Դրա համար, ի մի բերելով նախկինում հետազոտողների կողմից կատարված դրական աշխատանքը, անդրադառնանք Մամիկոնյանների արտաքինին, սովորույթուններին, անուններին, ավանդույթյան մեջ բերված անուններին և այլ հարցերի, ինչպես նաև Մամիկոնյան տոհմանվան բացատրությունը:

---

նեանները, «Բանասեր», Պարիս, 1904, էջ 241—242: Անդրիկեան Հ. Ն., Բիզանդի Մամիկոնեանները, Վենետիկ, 1904: Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 403—404: Թումանեան Մ., Մի քանի նկատողութիւն Մամիկոնեանց գաղթականութեան մասին, «Հանդէս Ամսօրեայ» (Հ. Ա.), 1911, էջ 513—528: Skold H., L'origine des Mamikonians „Revue des études arméniennes“, t. V, f. 1, Paris, 1925, pp. 131—136; Markwart J., Südarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, pp. 77—79; Miaker K., Die Herkunft der Mamikonier und der Titel Čenbakur, Wiener Zeitschrift für die Kunde, 39, 1932, pp. 133—145: Քասունի Ե. Ս., Ճենաց աշխարհ, «Հասկ» տարեգիրք, 9 տարի, Անթիլիաս, 1957, էջ 75—102: Toumanoff C., Studies in Christian Caucasian history, Georgetown, 1963, pp. 209—212; Ն ու լ յ ի՝ The Mamikonids and the Liparitds, Armeniaca, Venice, 1969, pp. 125—137: Վալադեան Վ., Մամիկոնեանների լինական ծագումը, «Հայրենիք», 1964, Թ. 4, էջ 17—34: Սվազյան Հ., Ճեները և «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), Երևան, 1976, Թ. 4, էջ 203—212: Bedrosian R., China and the Chinese according to 5—13th Century classical Armenian Sources, Armenian review (AR), 1981, 1, pp. 17—24; Balekjian K., Hittite and the Mamikonians, AR, 1983, 2, pp. 47—58: Մամիկոնյանների ավանդույթյան հնագույն աղբյուրը որոշել է Գ. Արգաշյանը, տն՝ս նրա «Մամիկոնյանների զրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ», «Բանբեր Մատենադարանի», 1964, Թ. 7, էջ 237—269, հմտ. նրա «ՍԵրհոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, 1965, էջ 72—96:

Ավանդուծյան համաձայն, որը տեղ է գտել Սեբեոսին կից Անանունի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկերում<sup>3</sup>, Մամիկոնյանների նախնիները ծագում են Ճենաստանից, եղև են արքայազուններ կամ առաջնակարգ իշխաններ, ներքին խռովությունների պատճառով թողել են Ճենաց աշխարհը և եկել Հայաստան<sup>4</sup>: Ըստ ավանդուծյան առավել տարածված տարբերակի՝ նրանք Հայաստան են եկել մ. թ. III դարում<sup>5</sup>:

Նախ ժամանակի մասին. կան Մամիկոնյանների գոյությունը Հայաստանում մ. թ. III դարից առաջ վկայող ուղղակի և անուղղակի մի շարք փաստեր, որոնցից գլխավորները դիտարկենք շատ համառոտ: Քիչ հավանական է, որ նորեկ Մամիկոնյանները զբաղեցնեին ողջ երկրի զորավարությունը բարձր պաշտոնը, քանի որ մի շարք աղբյուրներ վկայում են, որ արդեն մ. թ. III դ. վերջին, Տրդատ Մեծի օրոք, սպարապետությունը գտնվում էր Մամիկոնյանների ձեռքին<sup>6</sup> (և ոչ թե ասենք Մանդակունիների, ինչպես նշում է

3 Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխ. Գ. Արգարյանի, Երևան, 1979, 41, Դ. Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1914, V, Դ և V, և՛ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, լրաց. Ա. Սարգսեանի, Երևան, 1991, II, 2Ա:

4 Ավանդուծյունը ոչ էական փոփոխություններով տեղ է գտել նաև հետագա պատմիչների մոտ. տե՛ս Սոփերք Հայկականք, Զ, Վենետիկ, 1853, էջ 120—121; Մեսրոպ Բանանա Վայոցձորեցի, Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց, Մաղրաս, 1775, էջ 134; Վարդան վարդապետ, Աշխարհացոյց, քնն. հրատ. Լ. Պէրպէրեանի, Բարիդ, 1960, էջ 53—54; Սիմէօն վարդապետի Ապարանցոյ վիպասանութիւն սակս Պահլավունեաց զարմի և Մամիկոնեացն սեռի, Վաղարշապատ, 1870, էջ 28—31:

5 Ըստ Անանունի բերած տարբերակի՝ «յամս Արտաւանայ արքայի Պարթևաց և Մեծին Խոսրովու արքային Հայոց» (Սեբէոս, Դ), ըստ Խորենացու՝ Շասոհ Սասանյանի և Հայոց Տրդատ Թագավորի օրոք (Խորենացի, II, 2Ա):

6 Տե՛ս Ազաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), Թարգմ. հունարեն բնագրից Լ. Բարթիկյանի, առաջ. և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի, էջմիածին, 1966, Թ—Ժ, էջ 79—87; § 98, 124, 172; Мартъ Н., Крещение армянъ, грузинъ, абхазовъ и аланов

Մովսես Խորենացին)<sup>7</sup>: Դեռ ավելին. Արտավազդ Մամիկոնյանը Տրդատ Մեծի մանուկ ժամանակ Հայաստանի խնամակալն էր և այնքան մեծ հեղինակություն ուներ, որ օտար աղբյուրները նրան թագավոր էին անվանում<sup>8</sup>: Փավստոս Բուզանդի մի շարք տեղեկություններից երևում է, որ Մամիկոնյանները Հայաստանի բավականին հին տոհմերից էին, որ հայ Արշակունիների հետ հարաբերվել էին «ի սկզբան ի նախնեացն հետէ», և որ առաջին Արշակունիները գիտեին Մամիկոնյաններին<sup>9</sup>: Մինչև III դարը տեղի ունեցած տարբեր դեպքերի կապակցությամբ հունա-հռոմեական աղբյուրները հիշատակում են հայ զորահրամանատարներ Վասակների և Մանկայոսի մասին<sup>10</sup>, որոնց անունները և պաշտոնները ենթադրել են տալիս նրանց Մամիկոնյան պատկա-

ев. Григорием, СПб, 1905, с. 115, 123, 137; Բուզանդ, III, Դ, է, ԺԱ: Մեսրոպ քահանա, էջ 133:

7 Տե՛ս Մովսես Խորենացի, II, 22, 29, 26, III, 2: Որ այս հարցում վերոհիշյալ աղբյուրների տեղեկություններն են ճիշտ և ոչ թե Խորենացու, հանգամանալից ցույց են տվել՝ Անդրիկեան Ն., նշվ. աշխ., էջ 9—16, Համբարեան Հ., Խորենացույ կեղծիք մըն ալ Արտավազդ Մանուկունի՝ թէ Մամիկոնեան, ՀԱ, 1910, ք. 1, էջ 17—18: Քումանեան Մ., նշվ. աշխ., էջ 520—521: Արգարյան Գ., Մամիկոնյանների զրույցի հնագույն աղբյուրը հայ մատ. մեջ, էջ 247—249:

8 Տե՛ս Տրեբեխու Պոլիսե, ըստ *Tourneblize Fr., Histoire Politique et religieuse de L'Armenie*, Paris, s. d., p. 803.

9 Տե՛ս Փավստոս Բուզանդ, III Դ, Ը, ԺԱ, IV, Բ, V, ԼԵ, ԼԷ:

10 Տե՛ս *Ravil Armani, Quae Exstant Omnia*, v. II, Lipsiae, MCMLXVIII, Εκτασεις Κατα Αλαζων, 12, 13 (131—137 ԲԲ. դեպքերի կապակցությամբ հիշատակում է հայ զորավար Վասակի մասին): Կ. Տակիտոս, քաղեց և լատ. թարգմ. Պ. Սոտնիկյան, 1943, Երևան, Տարեգրություններ XV, 14 (62 Բ.-ի դեպքերի անընթացությամբ հիշատակում է Վասակ): Հովսեփոս Փլավիոս, Գիոն Կասիոս, թարգմ. բնագրից, առաջ. և ծան. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, Կասիոս, Հռոմեական պատմություն, Գ. 40, 28, 3 և Цицерон, Письма, пер. и ком. В. Горенштейна, т. II, М.—Л., 1950, Аit, V, 20, с. 51; (մ. թ. ա. 69 Բ. դեպք. անը. հիշատակում են Վասակ (Օսակես): *Annuaire, Митридатовы войны, ВОИ, 1946, № 4, пер. С. Кондратьева, 84, 86 (մ. թ. ա. 69 Բ. դեպք. անը. հիշ. է Մանկայոս):*

նելիությունը<sup>11</sup>: Այսպիսով, ավանդության տեղեկությունը ժամանակի մասին իրականությանը չի համապատասխանում<sup>12</sup>:

Խոսելով Մամիկոնյանների մասին ընդհանրապես և նրանց նախնիների մասին մասնավորապես՝ պատմիչները բնավ չեն հիշատակում Մամիկոնյանների արտասովոր տեսքի, նեղաչք լինելու մասին և այլն<sup>13</sup>: Մինչդեռ պետք է պահպանված լիներ Մամիկոնյանների մոնղոլոիդ ծագման, հայկական միջավայրի համար նրանց անսովոր արտաքին հատկանիշների մասին հիշողությունը: Սակայն աղբյուրներում Մամիկոնյանների նկարագրությունից երևում է, որ նրանք չեն տարբերվել մյուսներից<sup>14</sup>: Այսպիսով, Մամիկոնյանների արտաքինը չի խոսում ի նպաստ ավանդության:

Կարևոր է նաև Մամիկոնյանների անձնանունների քնննությունը, քանի որ, ինչպես հայտնի է, ազնվական տոհմերից յուրաքանչյուրն ուներ իր տոհմական, առավել բնորոշ անձնանունները: Մամիկոնյաններին առանձնահատուկ անձնանուններից Վարդանը, Վասակը, Վաչեն, Վարդը, Համազասպը, Արտավազդը, Հմայակը ունեն իրանական ծագում<sup>15</sup>:

11 Մի շարք հետազոտողներ ցույց են տվել այդ զորավարների հայ լինելը, բայց միայն Ն. Աղոնցը (Մանկայտի մասին, տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 415) և Մ. Թումանյանն (Վասակներից երկուսի մասին, տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 521) են հնթադրել նրանց Մամիկոնյան պատկանելիությունը: Պետք է նշել, որ անտիկ աղբյուրներն իբրև կանոն տոհմանուններ չեն նշում և անձանունների հիման վրա տոհմը որոշելու եղանակը կիրառելի է հատկապես այդ աղբյուրների նկատմամբ:

12 Ըստ Գ. Արզարյանի՝ ավանդության նախնական տարբերակում ժամայնակ նշված չի եղել (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 246—253):

13 Անկախ նրանից, որ որոշ պատմիչներ ձեռնաստան են անվանել նաև մեկ այլ երկրի, մենք ընդունում ենք, որ ավանդության մեջ նկարագրվող ձեռնաստանի տակ նկատի է ունեցել Չինաստանը:

14 Մ. Թումանյանի հիմնավորումները, որ Մամիկոնյանները Չինաստանից են, բայց եվրոպոիդ, ոչ մի քննադատության չեն դիմանում (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 516—520):

15 Տե՛ս Justi F., Iranisches Namenbuch, Marburg, 1895, pp. 38—39, 124—125, 130, 338—339, 342—343, 350—353, 357—358

Պետք է նշել, որ հայոց մեջ քիչ են գուտ հայկական ծագմամբ անձնանունները: Սակայն իրանական լայն ազդեցության շնորհիվ իրանական ծագում ունեցող բազմաթիվ անուններ ընդհանրապես լայն տարածում էին գտել՝ ընդունվելով իբրև տեղական: Մանվել և Սամվել անունները սուրբագրական են<sup>16</sup>, Վահանը ունի հայկական կամ իրանական ծագում<sup>17</sup>, իսկ Մուշեղը խեթական փոխառություն է<sup>18</sup>: Սրանք Մամիկոնյանների ամենազործածական անձնանուններն էին: Մամիկոնյանների մեջ, իհարկե, երբեմն հանդիպում էին նաև այլ անուններ, որոնք, սակայն, տիպական չէին նրանց համար և որոնց քննարկումը չի կարող նպաստել մեր խնդրի լուծմանը: Քանի որ խնամիական և այլ ուղիներով Մամիկոնյանների մեջ ուրիշ անունների ներթափանցումը աստիճանաբար աճեց, ուստի կարևոր է առավել վաղ հիշատակված նրանց անունների քննությունը: Մամիկոնյանների՝ այդպիսի անունների թվում է Կոմս եզակի անունը<sup>19</sup>: Ենթադր-

*Häbschmann H.*, Armenische Grammatik, ITh., Armenische Etymologie, Leipzig, 1897, pp. 47, 80, 82—83; Աճառյան Լ., Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 310, հ. Գ, Երևան, 1946, էջ 15, 89, հ. Ե, Երևան, 1962, էջ 39, 43, 69, 74:

<sup>16</sup> Աճառյան Լ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 204 և հ. Բ, Երևան, 1944, էջ 233, հ. Գ, Երևան, 1948, էջ 380—381:

<sup>17</sup> Տե՛ս Justi F., նշվ. աշխ., էջ 338—339; Աճառյան Լ., նշվ. աշխ., հ. Ե., էջ 9: Զահուկյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, ՊՐՀ, 1981, Թ. 3, էջ 61:

<sup>18</sup> Տե՛ս Աճառյան Լ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 455; Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 315:

<sup>19</sup> Տե՛ս Փալատոս Բուզանդ, V, և՛: Հետագայում այդ անունը կամ տիտղոսը հանդիպում է նաև Կոմսաձագերի առնչությամբ, տե՛ս Դանիելյան Է., Թոռնիկյանների քաղաքական դերը X դարի հայ-բյուզանդական հարաբերություններում, «Էրարեր հասարակական գիտությունների» (129), Երևան, 1977, Թ. 10, էջ 64—72:

վում է, որ սկզբնապես այդ տոհմում հանդիպել է նաև Կոռնակ անունը<sup>20</sup>; Կոմսը հայկական նույնանուն բառից է, որը ասորական և հունական փոխառություն է<sup>21</sup>, Կոռնակը հայկական կամ իրանական ծագում ունի<sup>22</sup>: Այսպիսով, Մամիկոնյանների տոհմական անձնանունների մեջ չկան այնպիսիները, որոնք կարող էին ճենական ծագում ունենալ<sup>23</sup>:

Այժմ անդրադառնանք Մամիկոնյանների սովորություններին: Այդ մասին արժեքավոր հիշատակություններ կան Փավստոս Բուզանդի մոտ: Պատմիչը նշում է. երբ սպանված Մուշեղ Մամիկոնյանի մարմինը տուն տարան, ընտանիքի անդամները չհավատացին նրա մահվանը: «Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եղին ի տանիսն աշտարակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր քաջ էր, Առլեզք իջանհն և յարուցանհն զդա»<sup>24</sup>: Առլեզները կամ արալեզները, որոնց մասին հիշատակում են նաև Սեբեոսին կից Անանունը<sup>25</sup>, Եզնիկ Կողբացին<sup>26</sup>, Մովսես Խորենացին (անունը չի նշում)<sup>27</sup>, Դավիթ Անհաղթը<sup>28</sup> և ուրիշներ, ըստ հին հայկական հավատալիք-

20 Տե՛ս Адоиц Н., Начальная история Армении у Себеоса, СПб., 1901, с. 3; История императора Иракла, сочинение Епископа Себеоса, СПб., 1862, с. 180, примеч. 43:

21 Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 646:

22 Տե՛ս Աճառյան Հ., նույն տեղում, էջ 647: Զաֆուկյան Գ., Հայաստանի լեզվի հին անատոլիական ծագման վարկածը, ՊՔԸ, 1976; Թ. 1, էջ 93 և 109; նույնի՝ Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները, էջ 58:

23 Մամիկոնյաններին բնորոշ անունները քննվել են նաև Անդրիկյանի կողմից (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 10—11), սակայն նա ինչպես դատարյուն հայերին, այնպես էլ Մամիկոնյաններին համարում է իրանական ծագման:

24 Փաւստոս Բուզանդ, V, 12:

25 Տե՛ս Սեբէոս, Ա:

26 Տե՛ս Եզնիկայ վարդապետի Կողբացու Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914, I, Իդ:

27 Տե՛ս Մովսես Խորենացի, I, ԺԵ:

28 Տե՛ս Դավիթ Անյաղբ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քնն. բնագրերը և առաջ. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 29, 136, 166:

ների երևակայական պաշտամունքային շնակերպ կենդանի-  
ներ էին, որոնք լիզելով սարանված հերոսների վերքերը, վե-  
րակենդանացնում էին նրանց: Ապացուցված է, որ առլեզ-  
ների պաշտամունքը եղել է բուն հայկական և գալիս է հնա-  
գույն ժամանակներից<sup>20</sup>: Այդ պաշտամունքի պահպանումը և  
կիրառումը Մամիկոնյանների կողմից՝ անգամ քրիստոնեու-  
թյան ընդունումից հետո՝ IV դարի 70-ական թվականներին,  
ցույց է տալիս որ Մամիկոնյաններն ունեին հնագույն հայ-  
կական ազգային հավատալիքներ:

Մեկ այլ օրինակ. նկարագրելով մանուկ Արտավազդ  
Մամիկոնյանին՝ Փավստոս Բուզանդը նշում է. «Եւ էր նա ի  
տիոց տղայ. և ըստ մանկութեանն օրինի, ըստ կրօնից Հայոց՝  
որպէս օրէն էր՝ զգլուխ մանկտոյն սոյնպէս ի ժամանակին  
գործեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ, և ցցունս էր  
թողեալ և գէս արձակեալ»<sup>80</sup>: Ինչպես երևում է Բուզանդի  
հիշյալ տեղեկությունից, մանուկների ծամ և խոպոպ պահելու  
հայկական այս սովորությունը գալիս է հեթանոսական ժա-  
մանակներից: Հետևապես այն պետք է բավական խոր ար-  
մատներ ձգած լիներ Մամիկոնյանների մեջ, որ IV դարում  
նույնիսկ շարունակվեր պահպանվել նրանց մոտ:

Անդրադառնանք նաև Մամիկոնյանների ծագման ավան-  
դության տարբերակներում տեղ գտած «Ճենական» անձնա-  
նուններին: Փավստոս Բուզանդի մոտ անձնանուններ չկան:  
Անանունի մոտ պահպանված ավանդության մեջ Մամիկոն-  
յանների նախնիները եղել են Մամիկ և Կոնակ երկու եղբայր-  
ները, որոնք եղել են Ճենացի Կառնամ նախարարի որդի-  
ները<sup>81</sup>:

Մամիկ և Կոնակ անուններն ակնհայտորեն դուրս են  
բերված Մամիկոն(յան) տոհմանունից, որը կրննարկվի ա-

---

<sup>20</sup> Տե՛ս Ղափանցյան Գ., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944,  
էջ 28—34:

<sup>80</sup> Փավստոս Բուզանդ, V, Խգ:

<sup>81</sup> Տե՛ս Սեբեոս, Ա:

աւանձին: Նշենք միայն, որ այս տոհմանվան երկփեղկումից առաջացած մամ և կոն մասերին ավանդության մեջ ավելացել են հայոց լեզվում ընդունված իկ և ալ նվազական մասնիկները՝ եղբայրների անուններն ունենալու համար<sup>82</sup>: Կառնամ անվան մեջ ամ-ը հայոց լեզվում ընդունված անձնանվանակերտ է, ինչպես Գեղամ, Պասքամ, Արգամ և այլ անուններում: Կառն արմատը թերևս համեմատելի է Կոռնակ անվան Կոռն արմատի հետ (ակ-ն այստեղ նվազական մասնիկ է): Ուսումնասիրողները Կոռնակ անունը համեմատում են նաև հայասական Karanni թագավորի անձնանվան հետ (որը կապում են խեթական Karuani անձնանվան հետ)<sup>83</sup>: Կառնամ անվանը լեզվաբանները շեն անդրադարձել, սակայն ակնհայտ է, որ եթե Կոռն(ակ)-ը կարող է համեմատվել Karanni-ի հետ, ապա Կառն(ամ)-ը վերջինիս ավելի հարազատ ձևն է:

Մովսես Խորենացու մոտ պահպանված ավանդության մեջ Մամիկոնյանների նախնու անունը Մամգուն է<sup>84</sup>, որը ևս ստացված է Մամիկոն(յան) անունից և նրա առասպելականացված ձևերից է: Արբոկ անունը նույնական է համարվում Արբակ անվան հետ, որն ունի իրանական ծագում<sup>85</sup>: Արբոկ էր կոչվում, ըստ ավանդության այս տարբերակի, ճենաց թագավորը: Նա ուներ երկու դայակորդի՝ վերոհիշյալ Մամգունը և Բղդտիւր<sup>86</sup>:

82 Եղբայրների անունները հետագա պատմիչների մոտ հիշվում են նաև Մամ և Կոն ձևով (Սոփերք, հ. 2, էջ 121), Մամկոն և Կոնակ ձևով (Մեսրոպ Բանաւ, նշվ. աշխ., էջ 134), Մամակ և Կոնակ ձևով (Վարդան վարդապետ, նշվ. աշխ., էջ 53—54), Մամ և Կոնակ ձևով (Սիմէօն Ապարանցի, նշվ. աշխ., էջ 29):

83 Տե՛ս Ջաֆուկյան Գ., Հայաստանի լեզվի հիմնատու. ծագմ. վարկածը, էջ 93 և 109:

84 Տե՛ս Մովսէս Խորենացի, II, 2Ա:

85 Տե՛ս Անտոյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 270: Անգամ հայ որոշ պատմիչներ Հայկազյան նահապետ Արբակին Արբոկ են անվանում (տե՛ս նույն տեղում): Justi F., նշվ. աշխ., էջ 20—21: Ջաֆուկյան Գ., Մովսէս Խորենացու «Հայոց Պատմության» ....աղբյուրները, էջ 57:

86 Տե՛ս Մովսէս Խորենացի, II, 2Ա:

Բղղոխի համար Ստ. Մալխասյանը նշում է, որ այն «պարզապես Բողղիխան տիտղոսն է շինական կայսրերի՝ մոնղոլներեն, որ նշանակում է մեծ կամ սուրբ թագավոր»<sup>87</sup>: Սակայն հայերը մոնղոլների հետ մեծապես հարաբերվել են շատ ավելի ուշ և խիստ կասկածելի է, թե մոնղոլներեն այդ բառն ինչպես է թափանցել հայերի մեջ հորենացու կամ ավելի վաղ՝ ավանդույթյան ստեղծման ժամանակ: Բղղոխն ավելի շուտ կամ պետք է ուրիշ բացատրություն ունենա, կամ հորենացու պատումում ներմուծված լինի հետագա գրիչների կողմից:

Ավանդույթյան մեջ հանդիպում է նաև ճենբակուր անվանումը<sup>88</sup>, որը ոչ թե անձնանուն է, այլ ճենաց թագավորների տիտղոսը և նշանակում է ճենաց աստծո որդի: Նշենք, որ ճենբակուր անվանումը ճենաց կայսրերի տիտղոսի հարազատ ձևը չէ, այլ նրա իրանական թարգմանությունը<sup>89</sup>: Ուստի կարելի է ենթադրել, որ հայերն այն պարզապես փոխ են առել հարևան Իրանից:

Ճենական անուններ չկան նաև Մամիկոնյանների ժառանգական կալվածքների տեղանունների շարքում: Օրինակ, Տայքում, որ Մամիկոնյանների հնագույն կալվածքն էր, գավառանուններն ու մյուս տեղանունները կամ ունեն հայկական ծագում, կամ իրենց հիմքում փոխառություն են ամփիչական հարևան լեզուներից: Նույն ձևով են բացատրվում նաև Տարոնի տեղանունները<sup>40</sup>, որը, ըստ հորենացու բերած

87 Մովսես Խառենացի, Հայոց Պատմություն, Թարգմ., ներած., ծան. Ստ. Մալխասյանի, Երևան, 1990, էջ 275, ծան. 191:

88 Տե՛ս Սեբեոս, Դ: Մովսես Խառենացի, II, 2Ա:

89 Տիտղոսի ճենական ձևն է *lien trü* (կրկնքի որդի): Ճենբակուրը լինարեն կամ թյուրքերեն չէ, այլ շինական *lien trü*-ի իրանական թարգմանությունը: Տե՛ս *Horn P.*, Grundris den Neupersischen Etymologie, Strassburg, 1893, pd. 1, *Hübshmann H.*, Armenische Grammatik, I, p. 49; *Cardona G. R.*, Dindia e la Cina secondo l'Asxarhacoye, Armeniaca, Venice, 1969, p. 96:

40 Ե՛վ Տայքի, և՛ Տարոնի տեղանունների համար տե՛ս Հիլքման Հ., Հին հայոց տեղույ անունները, Վիեննա, 1907, էջ 240—246, 184—198:

ավանդության, բաժին հասավ հենց Մամգունին ու Ճենաստանից գաղթած նրա ուղեկիցներին և ոչ, սահնք, Մամգունի հետագա սերունդներին: Մինչդեռ հավանական է, որ գաղթողներն իրենց նոր բնակավայրում կարող էին վերափոխել և իրենց հարազատ անուններով կոչել որոշ տեղանուններ: Բայց այդպես չի եղել և Մամիկոնյանների կավածքների տեղանունները ևս չեն խոսում հօգուտ ավանդության: Հետագայում Մամիկոնյաններին անցան այլ կավածքներ, որոնց տեղանունների քննարկմանը հարկ չկա դիմել:

Հայկական աղբյուրներում, այս ավանդությունից բացի, Ճենաստանից Հայաստան գաղթողների ներթափանցելու մասին որևէ վկայություն չկա<sup>41</sup>. չկա նաև օտար աղբյուրներում:


Պարզվում է, փաստորեն, չկան այնպիսի կովաններ, որոնց հիման վրա կարելի լիներ ավանդությունն իրական համարել: Ընդհակառակն, համեմատությունն այլ տոհմերի ծագման ավանդությունների հետ ակնհայտ է դարձնում, որ, ինչպես շատ ուրիշ տոհմերի (Բագրատունիներ, Արծրունիներ և այլն)՝ Մամիկոնյաններին ևս միտումնավոր վերագրվել է օտար, բարձր ազնվական ծագում, նրանց դերը և հեղինակությունը էլ ավելի բարձրացնելու համար:

Հավաստիության համար, թե Մամիկոնյանների նախնիներն ինչպես են հեռավոր Ճենաստանից հասել Հայաստան, ավանդության մեջ ստեղծվել է նրանց՝ նախ Իրանում տե-

---

մասամբ՝ Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, հ. 2, Երևան, 1988:

<sup>41</sup> Դեմետր և Գիսանե Երկու եղբայրների՝ Հնդկաստանից Տարոն գալու զրույցը (տե՛ս Զովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ., Աշ. Արքայհամյանի, Երևան, 1941, էջ 107—108), ինչպես և Օրբելյանների նախնիների՝ Ճենաստանից Վրաստան գալու զրույցը (տե՛ս Ստեփանեոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, աշխ. Կ. Շահնազարեանց, Փարիզ, 1859, ԿԶ) Մամիկոնյանների նույն այս ավանդության ձևափոխված հետագա արձագանքներն են:



11  
8464

ղաղրելու, ապա Հայաստան գալու դրվագը: Եվ բացատրելու համար, թե նրանք ինչու են թողել ճենաց թագավորությունը՝ հորինվել է (ինչպես շատ ուրիշ տոհմերի ավանդություններում) ներքին երկպառակությունների պարագան<sup>42</sup>:

Այժմ անդրադառնանք այն խնդրին, թե ինչպես է բացատրվում Մամիկոնյան տոհմանունը: Նշենք, որ տոհմերի ծագումը որոշելուն մեծապես կարող է նպաստել նաև տրվյալ տոհմանվան բացատրությունը: Մամիկոն(յան) անվանումը (յանը այստեղ հայոց լեզվում ընդունված տոհմանվանակերտ է) չի բացատրվում հայերենով կամ հարակից այլ լեզուներով: Չինարենով դրա բացատրության փորձը դատապարտված է անհաջողություն<sup>43</sup>:

Խեթական արձանագրություններում հանդիպում է amumikuni բառը, որ խուռիերեն բարձրագույն զինվորական կամ կրոնական պաշտոն է նշանակում<sup>44</sup>: Մամիկոն(յան) անվանումն իրավացիորեն այս բառի հետ է համեմատում խեթագետ Բալեկչյանը՝ գտնելով, որ amumikuni և Մամիկոն բառերի միջև համապատասխանությունն առավել պակաս է դառնում, երբ հաշվի ենք առնում, որ փակ վանկային am հիմքը կարող է փոխվել բաց վանկային ma հիմքի<sup>45</sup>:

<sup>42</sup> Տե՛ս Փաւստոս Բուզանդ, V, 7, լէ: Սերէոս, Դ: Մովսէս Խորենացի, II, 2Ա:

<sup>43</sup> Նման փորձ կատարել է Մ. Թումանյանը, ըստ որի Խորենացու նշած Մամիկոն անվան սկզբնական ձև Մամգունը նշանակում է Չինաստանից հարավ բնակվող հնդկավրոպացիների իշխան՝ մաների իշխան (տե՛ս Թումանեան Մ., նշվ. աշխ., էջ 518—519): Սակայն Մամգուն (կամ Խուրուն Ման) չի նշանակում մաների իշխան (տե՛ս Буцурин Н., Собрание сведений о народах, обитавших в Ср. Азии в древ. времена, т. I, М.—Л., 1950, с. 23). Իսկ ման անվանումը, որ մյուս և յառ մոնղոլ-մերական ժողովուրդների նախնիների անվանումն էր, հարավում տարածվել է մ. թ. VI դարում (տե՛ս Итс Р., Мань в этногенезе мяо ляо, Советская этнография, 1959, 5, с. 96):

<sup>44</sup> Տե՛ս Fridrich J., Kammanhuber An., Hethitisches Wörterbuch, Lieferung, 1, Heidelberg, 1975, p. 69.

<sup>45</sup> Տե՛ս Balekjian K., նշվ. աշխ., էջ 47—53.

Ակնհերև է, որ amumikuni բառն առնչվում է Մամիկոնյաններին, իբրև գլխավոր զորահրամանատարների, նաև իր նշանակությամբ: Հայտնի է, որ մի շարք տոհմանուններ առաջացել են տվյալ տոհմերի զբաղեցրած պաշտոնների անվանումներից: Բացառված չէ, որ զորահրամանատարի (գլխավոր կամ ոչ գլխավոր) պաշտոնի համար մեզ մոտ ևս օգտագործվել է վերոհիշյալ համարժեք բառը (ինչպես հետագայում ասորականի նմանությամբ՝ թուրթանը, իրանականի նմանությամբ՝ զորահրամանատարը, սպարապետը և այլն): Մամիկոնյան անվանումն էլ կարող էր առաջանալ պաշտոնի անվանումից:

Խեթա-խուռիական ժամանակներից ի վեր Մամիկոնյանների գոյության մասին կարող է վկայել նաև նրանցում տարածված Մուշեղ անձնանունը: Այն համարվում է խեթական փոխառություն և համապատասխանում է Մուրշիլ անձնանվանը<sup>46</sup>, Այն պետք է որ լինի անմիջական փոխառություն, քանի որ չկան միջնորդավորված անուններ:

Հիշյալ ժամանակներից ի վեր տոհմերի գոյության փաստեր են նաև Ամատունիների և Խոռխոռունիների օրինակները: Ամատունիների տոհմանունն, ըստ հետազոտողների, ունի խեթա-լուվական<sup>47</sup>, իսկ Խոռխոռունիներինը՝ խուռիական ծագում<sup>48</sup>: Նշենք, որ հայոց լեզվում կան խեթերենից և խուռիերենից կատարված այլ փոխառություններ ևս<sup>49</sup>:

46 Տե՛ս Աճառյան Լ., նշվ. աշխ., հ. 9, էջ 455: Զաֆուլյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970, էջ 162: Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 315:

47 Տե՛ս Զաֆուլյան Գ., Հայերենը և հնդեվրոպ. հին լեզուները, էջ 161: Նույնի՝ Հայոց լեզվի պատմություն, էջ 315:

48 Տե՛ս Ղափանցյան Գ., Ասուրա-բաբելական բառեր հայերենում, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների, 1945, թթ. 3—4, էջ 15:

49 Օրինակ խեթա-լուվական ծագում ունեն. Տորք, Արմավիր հատուկ անունները, բրուտ, գորգ, ծախ բառերը և այլն (տե՛ս Զաֆուլյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 313—315), խուռիական ծագում ունեն նուռն, փանձոր, խոռ «ժլատ» բառերը և այլն (տե՛ս նույն տեղում, էջ 425—426):

Ընդհանրացնելով քննարկված բոլոր փաստարկները՝  
կարելի է հանգել այն եզրակացության, որ Մամիկոնյան-  
ներն ունեն տեղական, հայկական ծագում և նրանց ծագման  
ավանդությունը չի համապատասխանում իրականությանը:

ԱՆԿՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 1913 Թ.

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետեւանք Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում առաջին անգամ միջազգային դիվանագիտութեան խնդիր գրանցված Հայկական հարցը իր լուծումը շատացավ XIX դարի վերջին տասնամյակներին և ավելի ու ավելի բարդանալով, շարունակվեց մնալ միջազգային դիվանագիտութեան ուշադրութեան կենտրոնում նաև XX դարի սկզբին: Հայկական հարցը Մեծ տերութիւններին հետաքրքրում էր այնքանով, որքանով այն կարող էր ծառայել իրենց նվաճողական քաղաքականութեան շահերին: Այդ էր պատճառը, որ XX դարի սկզբին՝ Բալկանյան պատերազմների ընթացքում նորից վերաբացված Հայկական հարցը ավելի սրվեց առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ օրակարգում էր աշխարհի վերաբաժանումը:

1912 թ. աշնանից Հայկական հարցը, որը հանգում էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու խնդրին, նորից դարձավ միջազգային շահարկութեան առարկա:

Թուրքական կառավարութիւնը տեսնելով, որ Հայկական հարցը դառնում է տերութիւնների քննարկման նյութ, փորձեց կրկին սեպ խրել դաշնակիցների միջև, նրանց հակասութիւններն ու տարաձայնութիւններն օգտագործել Հայկական հարցի լուծումը տապալելու համար:

Բարձր Դուռը բարենորոգումների իրագործման հարցով որոշում է դիմել միայն Անգլիային, վերջինիս հակադրելով Ռուսաստանին և Ֆրանսիային<sup>1</sup>:

1913 թ. ապրիլի 24-ին թուրքական կառավարությունը լոնդոնում իր դեսպան Թևֆիկ փաշայի միջոցով դիմում է բրիտանական կառավարությանը՝ անգլիական ժառանգյունք վարձելու խնդրանքով: Վերջիններիս անհրաժեշտությունն առաջացել էր «Վիլայեթների նոր օրենքի» հետ կապված, որն ընդունվել էր Թուրքիայի կառավարության կողմից և պետք է իրագործվեր Անատոլիայի Արևելյան և Հյուսիսային սեկտորներում: Արևելյան սեկտորն ընդգրկում էր Վան, Բիթլիս, Խարբերդ և Դիարբեքիր, իսկ Հյուսիսայինը՝ էրզրում, Սվազ և Տրապիզոն վիլայեթները:

Թուրքերը Անգլիայի կառավարությանը խնդրում էին յուրաքանչյուր սեկտորի համար իրենց տրամադրել ժանդարմերիայի մեկական տեսուչ, յուրաքանչյուր վիլայեթի համար՝ ժանդարմերիայի մեկական սպա, գյուղատնտեսության, հասարակական աշխատանքների և ներքին գործերի նախարարությունների համար՝ մեկական խորհրդական: Բացի խորհրդականից ներքին գործերի նախարարության համար պահանջվում էր նաև գլխավոր տեսուչ<sup>2</sup>:

Դիմելով Անգլիային, թուրքական կառավարությունը վկայակոչում էր 1878 թ. հունիսի 4-ի անգլո-թուրքական դաշնագիրը, որի համաձայն սուլթանը Անգլիային խոստացել էր բարենորոգումներ անցկացնել՝ ապահովելու համար քրիստոնյա հպատակների բարվոք կառավարումը և պաշտպանությունը:

Այսպիսով, թուրքական կառավարությունը ցուցաբերելով կեղծավոր քաղաքականություն բարենորոգումներ անց-

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Երևան, 1972, էջ 178:

<sup>2</sup> „British Documents on the Origins of the War“, vol. X, part I, № 480 (այսուհետև՝ BDOW).

կացնելու վերաբերյալ, առաջին հերթին աշխատում էր կան-  
խել Ռուսաստանի հնարավոր միջամտութիւնը:

Թուրքիայի առաջարկը լուրջ քննարկման առարկա դար-  
ձավ անգլիացիների համար: Արտաքին գործերի նախարա-  
րութիւնում իշխում էին տարբեր կարծիքներ: Նախարարու-  
թյան քարտուղարներ Լ. Մալլեթը և Ա. Նորմանը մեծ ոգևո-  
րութիւն էին ցուցաբերում այս հարցի կապակցութեամբ և  
գտնում էին, որ առաջարկն անմիջապէս պետք է ընդունել:  
Լ. Մալլեթը նշում էր, որ հարցն ինքնին կարևոր քաղաքական  
ընույթ ունի<sup>3</sup>: Ի տարբերութիւն նրանց, արտաքին գործերի  
փոխնախարար Ա. Նիքոլսոնը գտնում էր, որ առաջարկի ըն-  
դունումը վտանգավոր է, քանզի այն նոր խնդիրներ ու բար-  
դութիւններ առաջ կբերեր թե՛ Անգլիայի, թե՛ Բարձր Դռան  
համար:

Անգլիայի արտգործնախարարութեանը մտահոգում էին  
հետևյալ հարցերը. 1) ընդունե՞լ, թե՞ չընդունել թուրքական  
խնդրանքն ընդհանրապէս, 2) ընդունել ամբողջութեամբ, թե՞  
միայն մասամբ, 3) ի՞նչ արձագանք կստանա նրանց հա-  
մաձայնութիւնը մյուս մեծ տերութիւնների կողմից:

Առաջին հարցի վերաբերյալ քննարկումն իհարկե ձևա-  
կան բնույթ ուներ: Անգլիական կառավարութիւնը լավ էր  
գիտակցում, որ Թուրքիայի ընտրութիւնը պատահական չէր  
և, բացի այդ, կառավարութիւնն ու արտգործնախարարու-  
թյան ղեկավարները ոչ մի դեպքում չէին հրաժարվի այն  
փայլուն հնարավորութիւններից, որպիսիք ստեղծվում էին  
Թուրքիայի առաջարկութեամբ: Առաջարկի ընդունումն Անգ-  
լիային հնարավորութիւն կտար իր ազդեցութիւնը տարածել  
Փոքր Ասիայում և այս տարածաշրջանում աստիճանաբար ի-  
րագործել իր տնտեսական, առևտրական ու քաղաքական  
նպատակները: Դրա շնորհիվ Անգլիան կկարողանար նվա-  
զեցնել իր գլխավոր հակառակորդի՝ Գերմանիայի աճող ազ-  
դեցութիւնը Թուրքիայում: Անգլիայի համար շատ և շատ  
կարևոր էր նման հնարավորութեան ձեռքբերումը:

<sup>3</sup> BDOW, № 479.

Թուրքիային դրական պատասխան տալու համար անգլիական կառավարությունը հիմք էր ընդունում ոչ թե Թուրքիայի վարչական ապարատի վերակառուցման ցանկությունը, այլ միայն իր երկրի շահերը: Սակայն անգլիացիներն աշխատում էին թաքցնել իրենց շահամոլ քաղաքականությունը «մարդասիրության» քողի տակ: Լ. Մալլեթը նշում էր, քանի դեռ բարենորոգումների նախագիծը հաստատված չէ, թուրքական իշխանությունները անպայման կփորձեն կանխել այն: Դա միաժամանակ Թուրքիայի ձեռքերը կաղատեր զանգվածային նոր կոտորածներ կազմակերպելու այն նահանգներում, որոնց համար նախատեսվում էին բարենորոգումները: Ելնելով դրանից, Մալլեթը գտնում էր, որ անգլիացիներն են այն միակ ժողովուրդը, որ պետք է ստանձնեն բարենորոգումների պատասխանատվությունը և դրանք հաջողությամբ իրագործեն, և որ Բրիտանիան է այն միակ պետությունը, որին այդ հնարավորությունը կվստահեն մյուս երկրները<sup>4</sup>: Անգլիացու այս համոզմունքը իր ժողովրդի ու պետության բացառիկության մասին անհիմն էին ու անբացատրելի:

Անգլիայի արտաքին գործերի նախարարության պարագլուխները, նույնիսկ նեղ շրջանակներում Թուրքիայի առաջարկն ընդունելու հարցը քննարկելիս, չէին թաքցնում իրենց կեղծ գոհունակությունը դեպի Թուրքիան, նրա շահերը պաշտպանելու պատրաստակամությունը: Նրանք մտահոգված էին, որ Թուրքիան ծառայողներ վարձելու առաջարկով դիմել էր միայն Անգլիային և վախենում էին, որ թուրքական վարչական ապարատի տարբեր ճյուղերում միայն մեկ տերության գործիչների ներգրավումը կարող էր բարդություններ առաջացնել Թուրքիայի համար, հարուցելով մյուս տերությունների դժգոհությունը<sup>5</sup>: Անգլիայի արտաքին գործերի նախարար է. Գրեյը Կ. Պոլսում անգլիական դեսպան

<sup>4</sup> BDOW, № 479.

<sup>5</sup> BDOW, №№ 479, 480.

Ղուկասին գրած նամակում նշում է. «Անգլիական կառավարությունը չի ցանկանում նման դժվարություններ առաջացնել թուրքիայի համար, քանի որ ամեն կերպ՝ իր հնարավորությունների սահմաններում, աշխատում է և պատրաստ է օգնել թուրքական կառավարությանը, որ նա իրագործի բարենորոգումների իր հիանալի մտադրությունները»<sup>6</sup>: Անգլիան փորձում էր հավաստիացնել, թե «Բրիտանիայի ամենամեծ ցանկությունն է պահպանել թուրքիայի իշխանությունը Ասիայում և անցկացնել բարենորոգումներ հայերի համար»<sup>7</sup>: Իրականում անգլիական կառավարությանը ամենևին էլ չէր հուզում ո՛չ հայերի ճակատագիրն ընդհանրապես, ո՛չ էլ բարենորոգումների հարցը մասնավորապես: Անգլիայի ցանկությունն էր, որպես գլխավոր խաղաքարտ, կրկին Հայկական հարցը ծառայեցնել իր նպատակներին:

Կասկած չկար, որ Բրիտանիան, ելնելով իր սեփական շահերից, պետք է ընդուներ թուրքիայի առաջարկը, սակայն երկար ժամանակ նա, վարելով իր դիվանագիտական խաղերը, ձգտելու էր տպավորություն ստեղծել, թե ցանկանում է իմանալ իր դաշնակիցների կարծիքը և մինչև անգամ «ղեկավարվել» դրանով:

Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը հուզող մյուս խնդիրը թուրքական առաջարկությունն ընդունելու շրջանակների հարցն էր: Այսինքն՝ այն ընդունել մտրոզովին և թուրքիա ուղարկել ծառայողներ բոլոր ասպարեզների համար, որ խնդրել էին թուրքերը, թե՞ ընտրովի՝ միայն այն բնագավառների համար, որոնք անգլիացիներին թվում էին կարևոր:

Անգլիական տեսակետից առաջարկի ամենակարևոր և ընդունելի մասը վերաբերում էր ժանդարմերիային: Անգլիան իր համաձայնությունն աշխատում էր բացատրել իր այն պատասխանատվության ոչ հստակությամբ, երբ ժանդար-

<sup>6</sup> ՀՀ ԳԿԳԱ, ք. FO, Rol. 48, FO 195/2450, p. 117.

<sup>7</sup> BDOW, № 479.

մերիայում սպանների ու տեսուչների պաշտոնները անգլիացիների փոխարեն կգրավենին այլ տերությունների ներկայացուցիչները<sup>8</sup>։ Ինչևէ, եթե տեղական քննարկումից հետո նախարարության ղեկավարները, նախարար է. Գրեյի գլխավորությամբ, միանշանակ կարծիք ունենին ժանդարմներիայի հարցի շուրջ, ապա մյուս բնագավառների ծառայողների հետ կապված պատկերը չէր հստակեցվում։ Բանն այն է, որ անգլիական դիվանագետները մեծ կարևորություն չէին տալիս գյուղատնտեսության, անտառապահության, արդարադատության և հասարակական աշխատանքների նախարարությունների տեսուչների պաշտոններին և գտնում էին, որ դրանք կարելի էր զիջել գերմանացիներին կամ ֆրանսիացիներին<sup>9</sup>։ Անգլիան բավական կարևոր և ընդունելի էր համարում ծառայությունը ներքին գործերի նախարարության ասպարեզում։ Սակայն այստեղ նույնպես նա ընտրություն էր կատարում՝ առավելություն տալով ներքին գործերի նախարարության գլխավոր տեսուչին, որը կծառայեր որպես կապող օղակ կառավարության և ժանդարմներիայի տեղական տեսուչների միջև։

Անգլիային անհանգստացնող երրորդ խնդիրը Մեծ տերությունների վերաբերմունքն էր իր հնարավոր դրական պատասխանի նկատմամբ։ Մեծ Բրիտանիայի համար պարզ էր, որ տվյալ դեպքում բոլորից շատ մտահոգված կլինեի Ռուսաստանը՝ միակ պետությունը, որը ուղղակիորեն և անմիջապես սահմանակցում էր Թուրքիային։ Այս հանգամանքը կարող էր նպաստել Անգլիայի հարևանությունների լարմանը իր դաշնակցի՝ Ռուսաստանի հետ։ Սակայն անգլիական կողմը թաքցնում էր իրեն անհանգստացնող այս հանգամանքը և միևնույն ժամանակ, շքանկանալով կորցնել հեղինակությունը Թուրքիայի մոտ, պատկերը ներկայացնում էր այնպես, թե Ռուսաստանի դժգոհությունը կարող էր բար-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>9</sup> ԸՅ ԳԿԳԱ, ֆ. ԲՕ, Ղոլ 48, ԲՕ 196/2150, p. 117.

դուժյուններ առաջացնել հենց Թուրքիայի համար: Այդ պատ-  
ճառով է. Գրեյը թուրքական կառավարութեանն առաջարկում  
էր նախապես Ռուսաստանին որոշակիորեն տեղեկացնել ի-  
րենց՝ թուրք-անգլիական ծրագրերին: Անգլիական գործիչ-  
ների կարծիքով Ռուսաստանին հաղորդվելիք տեղեկութուն-  
ները կարող էին որոշ շահով փարատել Ռուսաստանի կաս-  
կածները իրենց երկրի դիրքորոշման վերաբերյալ<sup>10</sup>: Ռու-  
սաստանին տեղյակ պահելու հարցը դիմադրութուն չառա-  
ջացրեց թուրքական կառավարութեան շրջաններում, սակայն  
նա բացարձակ դեմ էր Ռուսաստանի մասնակցութեանը ա-  
ռաջարկված գործում:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային և Գերմանիային, ապա  
անգլիական դիվանագետները չէին կարծում, թե թուրքական  
վարչութեան տեղական օղակներում ժառանգողների նշանա-  
կումը կարող էր հակասել նրանց շահերին: Սակայն նրանք  
գտնում էին, որ ներքին գործերի նախարարութեան համար  
առաջարկված պաշտոնների հանգամանքը կարող է դժգո-  
հութեան ու նախանձի տեղիք տալ<sup>11</sup>: Ելնելով դրանից, նրանք  
Թեֆլիկ փաշային խորհուրդ էին տալիս դիմել այնպիսի քայ-  
լերի, որոնք կկանխեն նաև այս անցանկալի երևույթները:

Ինչևէ, Բրիտանիան պատրաստվում էր դրական պա-  
տասխան տալ Թուրքիային: Անգլիական կաբինետը դեռ չէր  
դիմել գործնական քայլերի, երբ նրա ծրագրերը հայտնի  
դարձան Ռուսաստանին, որը փորձում էր խոչընդոտել դրանց  
իրագործումը: Ռուսաստանի արտգործնախարարը Գրեյի ու-  
շադրութունը հրավիրում էր այն հանգամանքի վրա, որ  
Ռուսաստանը մեծ կարևորութուն է տալիս ժանդարմերիայի  
հարցին և այն ոչ մի կերպ չի անջատում Ասիական Թուր-  
քիայում կատարվելիք բարենորոգումների հարցից: Այդ իսկ  
պատճառով Ռուսաստանն առաջարկում էր խնդրո առարկա  
հարցի քննարկումը հանձնարարել երեք ղեկավարներին<sup>12</sup>: Այ-

10 Տե՛ս նույն տեղում, Բ. 119:

11 BDOW, № 479.

12 Նույն տեղում, № 484:

սինքն՝ Ռուսաստանը բացահայտ դեմ էր Անգլիայի ձեռնարկած միակողմանի քայլերին:

Սակայն անգլիական կաբինետը չէր պատրաստվում հրաժարվել Թուրքիայի առաջարկից և գտնում էր, որ անհրաժեշտ էր այդ հարցում կոտրել Ռուսաստանի և Ֆրանսիայի դիմադրությունը: Ա. Նիքոլսոնը Ֆրանսիական և ռուսական դեսպաններին փորձում էր համոզել, թե իրոք Հայաստանի համար բարենորոգումները հրատապ են, բայց դրանք հնարավոր չէ իրագործել ընդհանրապես, եթե մերժվի ժանդարմերիայի վերաբերյալ արված առաջարկը, որովհետև այդ դեպքում Թուրքիան կարող է հետ կանգնել բարենորոգումների ցանկությունից<sup>18</sup>: Նիքոլսոնը ռուսներին փորձում էր համոզել, թե իրենք ոչ մի շահ չունեն տվյալ հարցում, որ միայն բարենորոգումներ կատարելու միտումն է իրենց ստիպում գոնե մասամբ ընդունել արված առաջարկը: Սակայն անգլիական դիվանագիտության ջանքերն ապարդյուն էին: Ռուսական կաբինետը չէր պատրաստվում փոխել իր տեսակետը: Ռուսաստանի դիրքորոշմանը հակառակ Ֆրանսիան ամբողջովին կիսում էր Անգլիայի կարծիքը:

1913 թ. մայիսի 24-ին է. Գրեյը թուրքական կառավարությանը տեղեկացնում է Նորին Մեծության կառավարության «անկեղծ» ցանկության մասին և նշում, որ կայսերական կառավարությունը պատրաստ է, հնարավորության սահմաններում, օգնել օսմանյան կառավարությանը՝ իրագործելու իր «փայլուն» մտադրությունները: Արտգործնախարարը հայտնում է թուրքական կաբինետին, որ անգլիական կառավարությունը, Թուրքիայի համար բարդություններ շտեղծելու նպատակով, հարմար է գտնում սկզբնական շրջանում անգլիական ծառայողների գործունեությունը սահմանափակել համեմատաբար փոքր շրջանում, Անատոլիայի 7 վիլայեթների տարածքում: Զբաղվածության առումով բացի ներքին գործերի նախարարության գլխավոր հսկիչի պաշ-

18 Նույն տեղում, № 485:

տոնից, Անգլիան ընդունում էր միայն ժանդարմերիայում ծառայելու առաջարկը:

Թեև Անգլիան իր համաձայնությունն արդեն հայտնել էր Թուրքիային, բայց շարունակում էր ժանդարմերիայի և հայկական բարենորոգումների հարցերի շուրջ բանակցություններ վարել Ֆրանսիայի, Գերմանիայի և հատկապես Ռուսաստանի հետ: Նա չէր կարողանում ռուսներին համոզել, թե հայկական վիլայեթներում անգլիական սպանների ներկայությունը չի հակասում Ռուսաստանի շահերին և նրանց գործունեությունը չի առաջացնի Ռուսաստանի դժգոհությունը<sup>14</sup>: Իսկ Ռուսաստանն էլ ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել իր ներկայացրած պահանջներից և համաձայնել բրիտանական սպանների միջոցով Թուրքիայի ժանդարմերիայի վերակառուցմանը: Սազոնովը չէր թաքցնում Ռուսաստանի շահագրգռվածությունը Արևմտյան Հայաստանի հարցում և նույնիսկ տեղյակ էր պահել Գրեյին, որ արևմտահայերը դիմել են Ռուսաստանին բռնազրավելու իրենց երկիրը: Նշելով, որ Արևմտյան Հայաստանը բռնազավթելու մասին խոսք լինել չի կարող, Սազոնովն այնուամենայնիվ ընդգծում էր Ռուսաստանի անզիջում դիրքը այնտեղ բարենորոգումներ անցկացնելու կապակցությամբ: Ռուսական կառավարությունը այն կարծիքին էր, որ Թուրքական ժանդարմերիայի վերակառուցման գործում Անգլիային տրվող միակողմանի առավելությունները կարող էին ուժեղացնել Անգլիայի դիրքերը Փոքր Ասիայում՝ ի վնաս Ռուսաստանի շահերի: Ռուսաստանը գրտնում էր, որ Թուրքիայի ժանդարմերիայի վերակառուցմանը հավասարապես պետք է մասնակցեն Անտանտի բոլոր պետությունները և պետք է բացառվի Գերմանիայի միջամտությունը<sup>15</sup>: Իսկ Թուրքական կառավարությունն աշխատում էր այս հարցում մեկուսացնել Ռուսաստանին և, խաղալով Անգլիայի ու Գերմանիայի հակասությունների վրա, ընդհանրապես ձախողել որևէ պետության միջամտությունը Թուրքիա-

14 Նույն տեղում, № 492:

15 Նույն տեղում, № 499:

չի ներքին գործերին: Գիտակցելով այդպիսի խաղի իմաստը, Սազոնովը Անգլիային զգուշացնում էր, որ եթե Թուրքիան ընդհանրապես մերժի արտասահմանյան սպաների ծառայությունը, ապա Ռուսաստանը ստիպված կլինի հասկացնել նրան, որ հնարավոր նոր անկարգությունների և շարդերի դեպքում Ռուսաստանն անպայման ստիպված կլինի միջամտել: Այս անգամ, շեշտում էր Սազոնովը, «Ռուսաստանը չի կրկնի իր սխալը և հայկական շարդերի դեպքում պասիվ դիրք չի գրավի»<sup>16</sup>:

Ռուսական դիվանագետները շարունակում էին պնդել, որ բարենորոգումների ընդհանուր հարցի քննարկումը պետք է տեղի ունենա Կ. Պոլսում և ոչ թե Լոնդոնում, ինչպես առաջարկել էր է. Գրեյը:

Անգլիական կաբինետը անարդարացի և անհեթեթ էր համարում Սազոնովի պահանջը՝ մերժել Թուրքիային և անհնար էր համարում իրենց տված խոստման խախտումը: Ինչպես նշում էր Ա. Նիքոլսոնը, մերժումը ոչ միայն կբերեր Թուրքական կառավարության դժգոհությանը, այլև կբարդացներ և կհետաձգեր բարենորոգումների անցկացման հարցն ընդհանրապես: Իսկ Անգլիան, ինչպես հավաստիացնում էր Ա. Նիքոլսոնը, ցանկանում էր հարցը քննարկման դնել հնարավորին չափ առանց հետաձգման<sup>17</sup>: Բացի այդ, անգլիական դիվանագետներին մեծապես մտահոգում էր այն հանգամանքը, որ Թուրքիան մերժում ստանալուց հետո նույն խնդրանքով անմիջապես կդիմեր Գերմանիային, իսկ նման դեպքում ոչ ոք իրավասու չէր լինի կանխել այն: Իրադարձությունների այդպիսի շրջադարձը չէր համապատասխանի ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Անգլիայի շահերին:

Այսպիսով, իրավիճակն այնպիսին էր, որ փոխհամաձայնություն չգալը կարող էր հանգեցնել բարդությունների՝ Ռուսաստանի և Անգլիայի միջև: Անգլիայի համար ստեղծվել էին

<sup>16</sup> BDOW, № 492.

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում:

ու նախանձելի պայմաններ. մի կողմից Ռուսաստանը, որի հետ Անգլիան չէր ցանկանում վատացնել հարաբերությունները, և մյուս կողմից՝ Թուրքիան, որի աչքում հեղինակությունն ու վստահությունը կորցնելը ցանկալի չէր: Խնդիրն իրոք բարդ էր: Չցանկանալով «մարտի» ելնել Ռուսաստանի դեմ, Անգլիայի արտաքին գործերի նախարարությունը, Գրեյի գլխավորությամբ, նոր որոշում էր պատրաստում: Այն է՝ հետաձգել անգլիական սպաների ուղարկումը Թուրքիա՝ մինչև բարենորոգումների ընդհանուր նախագծի պատրաստ լինելը: Ա. Նիքոլսոնին հանձնարարվել էր այս որոշմանը ժանոթացնել թուրքական կառավարությանը, իսկ ժառանգության հետաձգումը բացատրելիս շեշտը դնել այն բանի վրա, որ ժանդարմերիայի հարցն ընդհանուր բարենորոգումների ծրագրի բաղկացուցիչ մասն է, և քանի որ բարենորոգումների նախագիծը պատրաստ չէ, ուստի սպաներն էլ չեն կարող անցնել աշխատանքի: Պատրաստվելով նման տեղեկատվություն ուղարկել Թուրքիա, անգլիական կառավարությունը 1913 թ. մայիսի 26-ին Ռուսաստանին հայտնում է իր պատրաստակամությունը՝ ընդունել Ռուսաստանի առաջարկը բարենորոգումների հարցը Կ. Պոլսում քննարկման դնելու վերաբերյալ: Անգլիական ղեկավարները իրենց կեղծ զոհունակությունն էին հայտնում բարենորոգումների քննարկման գործում Ռուսաստանի առաջատար դերի կապակցությամբ և համապատասխան կարգադրություններ էին անում Թուրքիայում Անգլիայի դեսպան Լոութերին<sup>18</sup>: Սակայն Բրիտանիայի «մտահոգվածությունը» վերջ չկար: է. Գրեյը անգլիական դեսպանների միջոցով Ֆրանսիայի, Ռուսաստանի և նույնիսկ Գերմանիայի կառավարություններին այն կարծիքն էր հայտնում, որ մինչև բարենորոգումների նախագծի քննարկումը բավական ժամանակ կանցնի, իսկ այդ ընթացքում հնարավոր են նոր ջարդեր, իսկ թուրքական կառավարությունը, որը հայկական ջարդերի մշտական կազմակերպիչն է եղել, ձեռնարկներ են կարող էր արդարանալ, թե իր

18 «Реформы в Армении», док. № 33, стр. 42.

խնդրանքը Անգլիայի կողմից մերժվել է, և ինքը հնարավորություն չունի կանխելու «անկարգությունները»: Գրեյը նշում էր, որ Ռուսաստանը պետք է նկատի ունենա այդ հանգամանքը, հակառակ դեպքում անգլիացիներն իրենց ազատ կհամարեն պատասխանատվությունից<sup>10</sup>:

Չնայած այսպիսի «բարյացակամ» հարաբերությունների դրսևորմանը, Անգլիայի և Ռուսաստանի համար պարզ էր, որ իրենց հարաբերությունները լարված են և հեռու իրական փոխհամաձայնությունից: Այս ամենը ակնհայտ էր նաև Թուրքիայի համար, որը Անգլիային արած առաջարկությամբ ձգտում էր և կարողացավ հասնել անգլո-ռուսական հարաբերությունների լարվածությանը և տարածայնությունների սրմանը: Թուրքիան դժգոհելու առիթ չունեիր, քանի որ, փաստորեն, իրագործվեց բարենորոգումները ձախողելու իր ավանդական քաղաքականությունը:

---

<sup>10</sup> BDOW, № 496, 499.

ՄԵՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԵ  
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հայութեան բնաջնջման, տեղահանման և Հայաստանի հայաթափման ծրագիրը, որը պետական քաղաքականութեան մակարդակի էր հասցվել սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի օրոք, «Ժառանգեցին» 1908 թ. իշխանութեան գլուխ անցած երիտթուրքերը: Նրանց ազգային քաղաքականութեան հավատամքը բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորումն էր և թուրք-օսմանների գերագույն իշխանութեան ներքո համաթուրքական պետութեան ստեղծումը՝ մյուս բոլոր ազգերին բնաջնջելու միջոցով, բացի թրքանալ ցանկացող ժողովուրդներից: «Մեր սրբազան պարտքն է իրականացնել թուրք ցեղի միութունը Միջերկրական ծովից մինչև Արալի ծովը... Այդ քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը Հայկական հարցի արմատական լուծումն է: Պետք է բնաջնջել հայերին մեր կայսրութեան մեջ»<sup>1</sup>: Այդպիսի պաշտոնական դիրքորոշում դրսևորեց երիտթուրքերի կուսակցութեան՝ 1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում տեղի ունեցած համագումարը:

Մի ողջ ժողովուրդ իսպառ բնաջնջելու հրեշավոր ծրագիրն իրագործելու պատեհ առիթը շուշացավ: 1914 թ. օգոստոսի 1-ին բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը: Պատերազմական իրավիճակն ամենահարմար ժամանակն էր՝ քիչ աղմուկով և մեծ հաջողությամբ վերացնելու

<sup>1</sup> Տե՛ս «Արարատ», էջմիածին, 1963, քթ. 6542—6543:

«Մեծ Թուրանի» ճանապարհին ընկած հայկական խոշորագույնը, կանխելու որևէ հաշտության սեղանի շուրջ Հայկական հարցի առաջադրումն ու քննարկումը:

Թուրքական կառավարությունը դրա համար նախապատրաստել էր և՛ ծրագիր, և՛ մարդասպանների ջոկատներ, և՛ աշխարհի հասարակական կարծիքի առջև արդարանալու հնարքներ:

Ոճրի ծրագիրը գործողության մեջ դրվեց 1915 թ. գարնանից: Նախ՝ ոչնչացվեցին թուրքական բանակում ծառայող 18—45 տարեկան ռազմազենակ տղամարդիկ՝ արևմտահայության պաշտպան բազուկը: Այա հոշոտվեց հայ մտավորականությունը՝ ժողովրդին լուսավորող, կազմակերպող և դեկավարող ուժը: Այնուհետև թուրքական կառավարությունն անցավ անզեն ու անպաշտպան հայ բնակչության բնաջնջման ծրագրի իրագործմանը: Արդյունքը եղավ այն, որ տեղահանվեց, բռնազաղթի ճանապարհներին ոչնչացվեց կամ Միջագետքի անապատներում բնաջնջվեց շուրջ 1,5 մլն անմեղ հայ՝ հայության ընդհանուր թվաքանակի մեկ երրորդը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անզեն ու անպաշտպան հայ բնակչությունն իր տանը՝ ռազմաճակատներից հեռու, այնքան կորուստներ ունեցավ, որքան Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան և ԱՄՆ-ը՝ եվրոպական ու ասիական ռազմաճակատներում: Բայց թուրք մարդասպանները դրանով չսահմանափակվեցին: Բռնի կերպով թուրքացվեցին մոտ 200 հազար հայ և շուրջ մեկ միլիոնը սփռվեց աշխարհով մեկ: Ավերվեցին ու թալանվեցին Արևմտյան Հայաստանի, հայության հոգևոր ու նյութական արժեքները: «Հայկական հարցն այլևս գոյություն չունի, որովհետև հայեր այլևս չկան», — պարծեցավ ոճրագործ Թալեաթ փաշան<sup>2</sup>:

<sup>2</sup> Մինախոյան Վ., Հայկական հարցը և իր տարրերը, «Հայրենիք», Բոստոն, 1934, հոկտեմբեր, թ. 12 (144), էջ 97: Готлиб В. В. Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, с. 41.

Թուրքական կառավարությունը պաշտոնական հաղորդագրություններում ճարպկորեն թաքցնում էր հայերի տեղահանման փաստը, աշխատում թույլ շտալ հայություն բնաջնջման մասին լուրերի տարածում, իսկ եվրոպական հասարակական կաթօրին հայտնի դարձած փաստերը հերքում էր կամ պատճառաբանում որպես հայերի հեղափոխական ելույթները ճնշող միջոցառումներ, կամ ռազմավարական նկատառումներով և հայության կյանքի ապահովության նպատակով բնակչության տեղափոխություն<sup>3</sup>։ Մինչև այսօր էլ թուրքական իշխանությունները և պատմագրությունը հենվում են այդ պատճառաբանությունների վրա և մեծ ջանքերով փորձում ապացուցել իրենց «ճշմարտացիությունը»՝ անտեղյակ ձևանալով պատմության Մեծ ոճրի մասին փաստող անհերքելի ապացույցներին<sup>4</sup>։

Ո՛չ քաղաքական, ո՛չ էլ ռազմավարական նկատառումները չէին կարող արդարացնել հայերի բնաջնջումը, որը հետևանք էր օսմանյան պետության թուրքացման ծրագրի։

Հայերի ցեղասպանության ողջ պատասխանատվությունն ընկնում է թուրքական կառավարության վրա։ Կ. Պոլսից էին գալիս հայերի բնաջնջման հրամանները, Կ. Պոլիսն էր վերահսկում դրանց կատարումը, ընտրում եղեռնագործ կադրերին՝ քաջալերելով առավել դաժաններին և պաշտոնագուրկ անելով խղճի խայթ ունեցողներին<sup>5</sup>։

Թուրքական կառավարողների գործողությունների, հայերի ցեղասպանության ընթացքի վրա մեծապես ազդեց այն

<sup>3</sup> Արեղյան Ա., Հայաստանը 1915 թվականին (մի քանի փաստաթղթեր), «Հայրենիք», Բոստոն, 1930, օգոստոս, թ. 10 (94), էջ 33; Киракосян Дж. С., Младотурки перед судом истории, Ереван, 1989, с. 182.

<sup>4</sup> Սարգսյան Ն., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 18—39.

<sup>5</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում։ Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 559—577.

դիրքորոշումը, որ դրսևորեցին մեծ պետութունները մարդկության դեմ գործված XX դարի առաջին հանցագործության՝ հայերի ցեղասպանության հարցում:

Մեծ պետութունների շարքում կայզերական Գերմանիան հայերի ցեղասպանության գլխավոր մեղսակիցն էր: Մերձավոր արևելքում Գերմանիայի ազդեցության ամրապնդման նպատակով Արևմտյան Հայաստանը հենակետ դարձնելու ծրագրերը, հայերի ընդգծված ռուսական արտաքին քաղաքական կողմնորոշումը, հետևաբար գերմանացիների համար նրանց «անհուսալիութունը» դեռևս XIX դարի վերջերից կանխորոշել էին կայզերական Գերմանիայի դիրքորոշումը հայերի ճակատագրի նկատմամբ: Այն որոշակիորեն ձևակերպված է արտաքին գործերի նախարար Ա. Յիմմերմանի հետևյալ հայտարարության մեջ. «Հստ էության հայերը պետք չեն Գերմանիային: Հայերով բնակեցված Հայաստանը վնասաբեր է նրա շահերին...»<sup>6</sup>: Փաստորեն, Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգից խուսափելու համար Գերմանիան, ըստ էության, հայերին լրիվ թողնում էր Թուրքիայի «տրամադրության տակ»: Գերմանական կառավարությունը արևմտահայության տեղահանման ընթացքում բնաջնջման մասին առաջին փաստերից հասկացավ Թուրքական կառավարության իրական նպատակը՝ համաշխարհային պատերազմն օգտագործել Հայկական հարցը Թուրքական տարբերակով «լուծելու» համար, այնպես, որ բացառվեր դրսից դիվանագիտական միջամտությունը: 1915 թ. մայիսի 31-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանն ուղարկած հեռագրում, հաստատելով այդ, Կ. Պոլսի գերմանական դեսպան Վանհենհայմը գրում էր. «...էնվեր փաշան խնդրում է, որ մենք դրանում (նկատի են առնվում տեղահանությունն ու կոտորածները — Լ. Ն.) նրանց արգելք չհանդիսանանք»: «Անշուշտ, — շարու-

<sup>6</sup> Степанян Ст., Армения в политике империалистической Германии, Ереван, 1975, с. 18.

նակում էր նա, — այդ միջոցառումները ժայրահեղորեն խիստ են հայ բնակչության համար... Մենք կմեղմացնենք այդ միջոցառումները, բայց սկզբունքորեն շինք արգելակի տեղահանությունը»: Խոսելով Ռուսաստանի կողմից «հրահրվող» մտացածին հայկական ելույթների մասին, որոնք իբրև սպառնում էին Թուրքիայի գոյությունը, նա գրում էր. «Հաշվի առնելով նրա (այսինքն՝ Թուրքիայի—Լ. Ն.) ռազմական և քաղաքական դրությունը՝ նշված միջոցառումներն անխուսափելի են»<sup>7</sup>:

Մեծ ոճրի նկատմամբ գերմանական պաշտոնական տեսակետը ձևակերպվեց եղեռնագործությունը սկսվելուց անմիջապես հետո: Ահա թե ինչպես էր այն արդարացվում Կ. Պոլսի գերմանական դեսպանատան 1915 թ. հունիսի 4-ի հայտարարության մեջ. «Կայսերական կառավարության կողմից Արևելյան Անատոլիայի վիլայեթների հայերի նկատմամբ անցկացվող ճնշիչ միջոցառումները թելադրված են ռազմական անհրաժեշտությամբ և պաշտպանական օրինական միջոցառումներ են: Գերմանական կառավարությունը հեռու է դրանց անցկացմանը հակադեմոստրացիայից, քանի որ այդ գործողությունները նպատակաուղղված են Թուրքիայի ներքին դրությունների կայունացմանը և ապստամբության բոլոր փորձերի կանխմանը: Այս տեսանկյունից գերմանական կառավարության տեսակետն ամբողջովին համընկնում է Բ. Դոան մեկնաբանություններին...»<sup>8</sup>:

Հայկական ցեղասպանության հարցում գերմանական կառավարության շմիջամտելու, դաշնակցի հակամարդկային

<sup>7</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии. Составитель и ответственный редактор сборника В. Микаелян. Ереван, 1995, док. R 14086, Ав. 17493, с. 174—175. Степанян Ст: Армения в политике империалистической Германии, с: 148.

<sup>8</sup> Степанян Ст. Геноцид армян в Османской империи в период первой мировой войны и преступное пособничество Кайзеровской Германии. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, ք. 1, էջ 201:

գործելակերպը հովանավորելու կեցվածքն ավելի էր ոգևորում թուրքական իշխանություններին: Վերջիններս չէին էլ թաքցնում հայության ֆիզիկական ունչացման գործում գերմանական կառավարության մասնակցությունը. «Հայերի ունչացումը ռազմական միջոցառում է, իսկ բանակը գտնվում է գերմանացիների ազդեցության ներքո: Ուրեմն, շնորհակալ եղեք գերմանացիներին»,—նշում էին թուրք պաշտոնյաները: Իսկ էնվեր փաշան, հայ ազգի բնաջնջումը գնահատելով որպես «Երիտասարդ Թուրքիայի ամենահիմնալի աբարքը», գտնում էր, որ «գերմանացիները պետք է երախտապարտ լինեն մեզ, որ ունչացնում ենք իրենց թշնամիներին»<sup>9</sup>: Փաստերը վկայում են, որ գերմանական կառավարությունն իր լուծյամբ ոչ միայն քաջալերեց հայության զանգվածային սպանդը, այլև որոշ վայրերում գերմանական ղինված դժերը մասնակցեցին հայերի ջարդերին<sup>10</sup>:

Հայերի ցեղասպանության մասին տեղեկություններ պարունակող լուրերն Արևմտյան Եվրոպա էին հասել 1915 թ. ապրիլի վերջին: Մինչ այդ ոչ մի տեղեկություն Թուրքիայից հնարավոր չէր ստանալ ո՛չ փոստի, ո՛չ հեռագրի միջոցով: Նույնիսկ շեղոք երկրների դեսպանություններն ու հյուպատոսությունները հնարավորություն չունեին որևէ նյութ հաղորդել: Դրա պատճառը ոչ միայն պատերազմական իրավիճակն էր, այլև այն, որ բոլոր հեռագրերն ու նամակները, դեպքերի ժամանակակիցների վկայությամբ, նախքան հասցեատիրոջը հասնելն անցնում էին Թալեհաթի ու էնվերի առանձնասենյակներով<sup>11</sup>:

Այնուամենայնիվ, եղեռնագործությունը հնարավոր չէր թաքցնել: Շուտով Եվրոպա հասան դեպքերին ականատես

<sup>9</sup> Степанян Ст. Армения в политике империалистической Германии, с. 150.

<sup>10</sup> 22 ՊԿՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 89, թ. 26: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 465, 537—538, 556—559: «Кавказское слово», 1916, № 62.

<sup>11</sup> 22 ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 824, թ. 55:

եվրոպական երկրների դիվանագիտական և հոգևորական առաքելութունների անդամների վկայութունները, Օսմանյան կայսրութունում և տարագիր հայերի խմբերին ապաստան տվող երկրներում ծառայող հյուպատոսների ու դեսպանների գրութունները: Դեռևս ապրիլի 7-ին Ամենայն Հայոց կաթողիկոսը դիմել էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին, Իտալիայի թագավորին ու ԱՄՆ-ի նախագահին (երկուսն էլ շեզոք երկրների ղեկավարներ էին)՝ խնդրելով հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել «ամբողջ Թրքահայաստանում զոհվող անմեղ քրիստոնյաներին», Բ. Դոանն առջև հանդես գալ հայերի ջարդը դադարեցնելու պահանջով<sup>12</sup>: Հենվելով այդ փաստաթղթի վրա՝ Ս. Սազոնովը հրահանգել էր Հոռմի ու Վաշինգտոնի ռուս դեսպաններին կայսերական կառավարության անունից գորավիզ լինել կաթողիկոսի խնդրանքին<sup>13</sup>: Միաժամանակ Ռուսաստանն իր դաշնակիցներին պաշտոնապես տեղեկացրել էր Թուրքիայում կատարվող հանցագործութունների մասին և առաջարկել հրապարակել համատեղ հայտարարություն՝ Թուրքիայի նախարարների խորհրդի անդամներին, ինչպես նաև հայերի կոտորածներին ուղղակի առնչված թուրք ղինվորական ու քաղաքային պաշտոնյաներին «անձամբ պատասխանատու համարվելու» մասին: Մինչ լոնդոնում մի կողմ կթողնեին անվճռականութունն ու կդրսևորեին պաշտոնական դիրքորոշում, Բ. Դոանն իրենց կառավարութունների բողոքները ներկայացրեցին Կ. Պոլսի ամերիկյան, իտալական ու բուլղարական ներկայացուցիչները<sup>14</sup>:

Լոնդոնում հապաղում էին, որովհետև վախենում էին, որ ջարդերի դատապարտումը մեղմացնող ազդեցություն ունենալու փոխարեն կարող էր, ընդհակառակը, թուրքական

<sup>12</sup> Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, դ. 26, թ. 34—35, 37, դ. 27, թ. 20, դ. 28, թ. 156—157, 159—160:

<sup>13</sup> Նույն տեղում, դ. 28, թթ. 156, 159—160:

<sup>14</sup> Նասիբյան Ա., Բրիտանիան և Հայկական հարցը 1915—1923 թթ., Թիբուր, 1994, էջ 74:

իշխանութիւններին «գրգռել» բրիտոնյաների նկատմամբ «ավելի ևս վրեժխնդիր» լինելու: Անգլիացիները նույնիսկ հույս չունեին, որ նման հայտարարութիւնը կարող էր արգելակիչ ազդակ հանդիսանալ թուրքերի համար: Նույն մտահոգութիւնն ունեւր նաև ֆրանսիական կառավարութիւնը: Չնայած դրան, Անտանտի տերութիւնները գիտակցում էին ցեղասպանութիւնը դատապարտելու, նրա կազմակերպողներին ու իրականացնողներին մերկացնելու՝ անհրաժեշտութիւնը, որովհետև կատարվածը հանցագործութիւն էր՝ ուղղված մարդկութեան ու քաղաքակրթութեան դեմ: Դաշնակիցները կարևորում էին նաև այն հանգամանքը, որ ցեղասպանութիւնն իրագործվում էր պատերազմական հակառակորդ թուրքիայում, իսկ նրա հակամարդկային գործելակերպը հովանավորում էր դաշնակիցը՝ համաշխարհային պատերազմը սանձազերծած Գերմանիան: Բնական է, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, որպես կովող կողմերից մեկը, պետք է օգտագործեին իրենց թշնամու դատապարտելի արարքների մասին զանազան աղբյուրներից ստացված տեղեկութիւնները՝ հանրային կարծիքը հակառակորդ պետութիւններին անարդարութեան, անգթութեան, բռնի ուժի գործադրման փաստերի դեմ տրամադրելու նպատակով: Հայերի ցեղասպանութեան դատապարտումն ունեւր նաև շահադիտական նպատակ՝ շկորցնել հայերի աջակցութիւնը պատերազմին<sup>15</sup>: Չէ՞ որ ավելի քան 150 հազար ռուսահայեր կոչվում էին ռուսական բանակում և հազարավոր ուրիշները հայկական սփյուռքից միացել էին բրիտանական ու ֆրանսիական բանակներին:

Ռուսական կառավարութիւնն առաջարկվող հայտարարութիւնն իր դաշնակիցներին հանձնեց Լոնդոնի ու Փարիզի

15 Հայաստանը միջազգային դիվանագիտութեան և սովետական արտաքին քաղաքականութեան փաստաթղթերում (1828—1923), Զ. Կիրակոսյանի խմբագրութեամբ, Երևան, 1972, էջ 376—377: Նասիրյան Ա., Կղզիաշխ., էջ 75:

ոուսական դեսպանների միջոցով: Սկզբնական նախագծում այն ակնարկությունը, թե այս ոճիրները «քրիստոնեություն դեմ» են գործվում, հանվեց Փարիզի բրիտանական դեսպան սրբ Բերտիի առաջարկությամբ և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարների համաձայնությամբ: Նրանք չէին կարող անտեսել բրիտանական ու ֆրանսիական կայսրությունների ոչ քրիստոնյա բնակչության կրոնական զգացմունքները:

Ի վերջո, 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի նախաձեռնությամբ Անտանտի կառավարությունները միասնաբար, հրապարակային հայտարարությամբ, պաշտոնապես դատապարտեցին հայերի կոտորածները: Փաստաթուղթն ուներ հետևյալ բովանդակությունը. «Վերջին մեկ ամսվա ընթացքում օսմանյան իշխանությունների ակնհայտ, հաճախ էլ նույնիսկ ուղղակի աջակցությամբ տեղի է ունենում հայերի կոտորած: Ապրիլի կեսերին նոր թափով այդպիսի կոտորածներ են տեղի ունեցել էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զինթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքում հարյուրավոր գյուղերի բնակիչներ ամբողջապես կոտորվել են: Վան քաղաքի հայկական թաղամասը պաշարված է քրդերի կողմից: Միևնույն ժամանակ թուրքական կառավարությունը ձերբակալում և աննախադեպ ճշնշումների է ենթարկում Կ. Պոլսի անմեղ հայ բնակչությանը:

Թուրքիայի կողմից կատարված այս նոր ոճրագործություններն ընդդեմ մարդկության ու քաղաքակրթության, պարտավորեցնում են Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններին հրապարակա՛վ հայտարարելու Բ. Դռանը, որ իրենք կատարված հանցագործության անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության՝ բոլոր անդամների, ինչպես նաև տեղերում կառավարության այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակցել են կոտորածին»<sup>16</sup>:

16 22 ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355—1—մ., թ. 149ա, ֆ. 450, ց. 2, գ. 88, թ. 30: Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում:

Այս հայտարարութեանը թուրքական կառավարութիւնը պատասխանեց հունիսի 6-ին: Հայերի ցեղասպանութիւնը գնահատելով որպէս թուրքիայի «ներքին խնդիր»՝ Բ. Դուռն արյունահեղութեան պատասխանատուութիւնը դնում էր հայերի վրա և գտնում, թե նրանք ապստամբել են բրիտանական, ֆրանսիական և ռուսական կառավարութիւնների դրոգմամբ: Հայտարարութեան համաձայն հայերի հեռացումը «որոշ շրջաններից» դեպի ուրիշ շրջաններ իբր եղել է «զինվորական հրամայական անհրաժեշտութեամբ պարտադրված» միջոցառում, որ թուրքական կառավարութիւնը հայերի դեմ պատժիչ միջոցների շի դիմել մինչև 1915 թ. հունիսը, երբ նրանք վանում և այլուր զենք վերցրին: Կատարվածն իբր հաջորդել է հայերի կողմից թշնամիներին օգնելու փաստին<sup>17</sup>:

Ժամանակային անջրպետ է առաջանում թուրքական կառավարութեան նշած ժամանակի և ռուսական կառավարութեան ապրիլի 27-ի հայտարարութեան միջև, որով նա ջարդերի մասին տեղեկացրել էր դաշնակիցներին և առաջարկել հանդես գալ ռճրագործութիւնը դատապարտող միասնական հայտարարութեամբ: Դա վկայում է այն մասին, որ կառավարութեան, այսպէս կոչված, «պատժիչ միջոցառումները» շատ ավելի վաղ էին ձեռնարկվել, և, որպէս դրանց հետևանք, հայերը ստիպված էին եղել որոշ վայրերում զենքի դիմել ինքնապաշտպանութեան նպատակով:

1915 թ. հուլիսին հայութեան բնաջնջման թուրքական քաղաքականութեան դեմ բողոքով, իսկ սեպտեմբերին՝ սուլթանին ուղղված նամակով հանդես եկավ Հոռմի պապը, բայց նրա նամակը մնաց անպատասխան:

---

Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 727: Армянский вопрос и геноцид армян в (1913—1918). Материалы Турции Политархива МИД Кайзеровской Германии, док. R 14086, Ав. 17667, с. 178.

17 Նասիրյան Ա., նշվ. աշխ., էջ 93—94:

Ժամանակն անցնում էր, բայց տերութիւններ խոտուումներն ու բարձրագոյ ճառերը գործի վերածվելու միտում չունեին: Կառավարական բարձր շրջաններից եկող համաշխարհային անտարբերութեան մթնոլորտում սովորական էր ընդունվում մի ողջ ժողովրդի ցեղասպանութեան փաստը, լուրջ վերաբերմունք չէր ցուցաբերվում այն հանգամանքին, որ մարդկութեան դեմ գործվում էր ոճրագործութիւն, որ միջազգային հարաբերութիւններում, ազգային հարցի լուծման ոլորտում ի հայտ էր գալիս խնդիրների լուծման նոր հակամարդկային եղանակ՝ ցեղասպանութեան պետական քաղաքականութիւնը: Հարցին այս տեսանկյունից մոտենալու փոխարեն բրիտանական կառավարութիւնը հրաժարվեց անգամ նյութական օգնութիւն ցույց տալ արևմտահայութեան «բեկորներին» և առաջարկեց, որպեսզի այդ գործը կազմակերպեն մասնավոր անհատները: Բրիտանական կառավարութեան հրաժարումը ենթադրում էր նաև ֆրանսիական կառավարութեան հրաժարում արևմտահայութեան՝ Եղեռնից մազապուրծ հատվածներին դրամական աջակցութիւն ցույց տալու գործից, որովհետև այդ մարդասիրական առաքելութեանն իր մասնակցութիւնը նա պայմանավորել էր միայն բրիտանական կողմի մասնակցութեամբ<sup>18</sup>: Հարցին, թերևս, ավելի լրջորեն էր մոտենում Ռուսաստանի արտաքին գործերի նախարարութիւնը: Նրա մշակած ժրագրով պետական միջոցները հայերին էին հասցվելու գաղտնի՝ Կ. Պոլսի ամբերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի միջոցով<sup>19</sup>: Այս դեպքում էլ, ինչպես վկայում է 1915 թ. դեկտեմբերի 18-ին արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին ուղարկած նամակը, ֆինանսների նախարարութիւնը հնարավոր չէր համարում «առկա ֆինանսական դրութեան պայմաններում» զանձատան վրա «պետական անհրաժեշտութեամբ չհարուց-

<sup>18</sup> Հայերի ցեղասպանութիւնն Օսմանյան կայսրութիւնում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 499—500:

<sup>19</sup> Հայաստանը Երևանից միջազգային դիվանագիտութեան փաստաթղթերում, էջ 377—378:

ված ծախս դնելը», «մանավանդ, որ այդ գումարը նախատեսվում էր փոխադրել թշնամական երկիր՝ թշնամու հպատակներին օգնություն ցույց տալու նպատակով»<sup>20</sup>։ Պարզվում է, որ ցարական կառավարությունը եվրոպական կառավարությունների առջև պաշտպանում էր իր իրավունքներն Արևմտյան Հայաստանում, իսկ նրա տարածքում բնակվող հայությունը անհրաժեշտ չէր համարում օգնել՝ համարելով նրանց թշնամու «հպատակներ»։

1915 թ. հուլիսի 27-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գեվորգ 5-րդին հասցեագրված գրություն մեջ Պողոս Նուբար փաշան ցավում էր, որ չի կարողացել որևէ գործնական արդյունքի հասնել տարագիր հայերին օգնելու հարցի շուրջ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի և մյուս դաշնակից պետությունների ղեկավարների հետ զրույցներում։ Տեղությունները, ցավակցելով հայերին, «խոստովանել էին, թե ներկայումս որևէ գործնական միջոց չունեն հայերին օգնելու համար»։ Եվրոպական քաղաքագետները հասկացրել էին, թե «մինչև պատերազմի նժարը Դաշնակիցների կողմը չթեքվի, անհնար է այդ խնդիրների, դրանց թվում և Հայկական հարցի լուծման մասին այժմվանից որոշակի հանձնառություններ ստանձնել և անկարող գտնվել դրանք գործադրելու»<sup>21</sup>։ Իրականում, 1915 թ. աշնանից Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի, իսկ 1916 թ. գարնանից՝ նրանց և Ռուսաստանի միջև բանակցություններ էին տեղի ունենում Թուրքիայի ասիական տիրույթների բաժանման շուրջ։ Օսմանյան «ժառանգությանը» տիրելը մի մասն էր նրանց նվաճողական ծրագրերի, որոնք ավելի կարևոր էին ու շահեկան, քան տարագիր հայերին օգնելը։ Անտանտի կառավարությունների հակասությունները Մերձավոր արևելքում և պետական

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 379—380։

<sup>21</sup> ՀՀ ՊԿԳԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, p. 43—44: Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915—1918, Documents. Edited and translated by Vatche Ghazarian. Waltham, 1996, doc. № 122, p. 210.

շահից այն կողմ ոչինչ չտեսնելու դիրքորոշումը թուրքական կառավարությանը գործողությունների ազատություն տվեցին Սրևմտյան Հայաստանում:

Էնվերը և Թալեաթը մինչև զանգվածային տեղահանություններն ու կոտորածները սկսելը խորհրդակցել էին Գերմանիայի դեսպան Վանհենհայմի հետ, իրազեկ պահել նրան իրենց ծրագրին: Վերջինս կաղերական իշխանության հետ խորհրդակցելուց հետո հավանություն էր տվել այդ դիվային ծրագրին՝ համապատասխան կարգադրություններ օւղարկելով էրզրումի, Ադանայի, Հալեպի, Մոսուլի ու Բաղդադի հյուպատոսներին<sup>22</sup>:

Չնայած դրան հայերի կոտորածների առիթով գերմանական կառավարությունը ևս պաշտոնական բողոք-հուշագիր ներկայացրեց թուրքական կառավարությանը: Դա 1915 թ. հուլիսի 4-ին էր, այսինքն՝ Վանի դեպքերից ճիշտ երեք ամիս և Մուշի, էրզրումի, Տրապիզոնի ու այլ շրջաններում կատարված կոտորածներից մեկ ամիս հետո: Հենց սա վկայում է գերմանական հուշագրի ձևական բնույթի մասին: Գերմանական կառավարությունը ստիպված էր այդպիսի քայլի դիմել, քանի որ մյուս տերություններն արդեն բողոքներ էին ներկայացրել և ինչ-որ շահով թուրքական զազանություններից սահմանազատվելն ուներ դիվանագիտական և քաղաքական անհրաժեշտ նշանակություն՝ պաշտպանել կաղերական Գերմանիայի հեղինակությունը հայերի ցեղասպանությանը մեղսակից լինելու վերաբերյալ թշնամական աշխարհի մեղադրանքներից: Իր հուշագրում գերմանական կառավարությունը հայերի ցեղասպանությունը որակելով որպես Թուրքիայի «ներքին խնդիր»՝ կցկտուր դժգոհություն էր հայտնում, այն էլ սոսկ թուրքական տեղական իշխանություններին, «ոսգմական պատճառներով թելադրված» քայ-

<sup>22</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии. Konst. 1 Ankara, 171. zu Ab 6381, с. 227.

լիքի, «օրինական պաշտպանական միջոցառումների» ժամանակ նրանց թույլ տված «ծայրահեղությունների» համար<sup>23</sup>։

Այժմ հասկանալի է, թե ինչու թուրքերը որևէ կարևորություն չտվեցին այս և հաջորդ բոլոր բողոքներին, որ ներկայացնում էին եվրոպական կառավարությունները։

Անգամ ԱՄՆ-ի՝ պատերազմում չեղոք քաղաքականություն վարող կառավարությունը չէր ցանկանում թուրքիայի և Գերմանիայի հետ հարաբերություններում բարդություններ առաջացնել ուղղակի բողոքներով կամ հուշագրերով։ Թուրքական կառավարության հայաչինջ քաղաքականության դեմ բողոքելը նա որակում էր որպես միջամտություն թուրքիայի ներքին գործերին։ Վաշինգտոնում այն կարծիքին էին, որ չպետք է թուրքիայի դեմ կիրառել պաշտոնական միջոցառումներ՝ չվտանգելու համար ամերիկացի առաքյալների և աճերիկյան կալվածների շահերը։ Չնայած դրան, ԱՄՆ-ում ստեղծվել էր Հայերի դեմ վայրագությունների ամերիկյան կոմիտե, բաղկացած թուրքական հարցերով հետաքրքրվող երևելի ամերիկացիներից, որը հավաքում էր ցեղասպանության վերաբերյալ փաստերը և հետադառնում դրանք<sup>24</sup>։

Միայն 1916 թ. փետրվարին ամերիկյան մամուլը տեղեկացրեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնական բողոք էր ներկայացրել թուրքական կառավարությանը հայերի կոտորածների շարունակման դեմ<sup>25</sup>։ Փաստաթղթում ամերիկյան կառավարությունը հայերի դեմ գործած աննախադեպ բռնությունների պատասխանատվությունը դրել էր թուրքական իշխանությունների վրա։ Փաստորեն, ԱՄՆ-ի պաշտոնական դիրքորոշումը էապես փոխվել էր, որովհետև 1916 թ. սկզբին արդեն այլ էր Միացյալ Նահանգներում վերաբեր-

23 Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությանը, 1914—1916 թթ., Երևան, 1967, էջ 414—415։

24 Նասիրյան Ա., նշվ. աշխ., էջ 80։

25 Նասիրյան Ա., նշվ. աշխ., էջ 83։

մունքը թե՛ պատերազմի, թե՛ Քուրքիայի ու Գերմանիայի նկատմամբ:

Ըիշտ է, եվրոպական տերութիւնները և ԱՄՆ-ը դատապարտեցին արեւմտահայերի ցեղասպանութիւնը որպէս մարդկութեան ու քաղաքակրթութեան դեմ գործված հանցագործութիւն և դրա ողջ պատասխանատւութիւնը դրեցին երիտթուրքական կառավարութեան վրա, այնուամենայնիվ նրանց դիրքորոշման մեջ ողջակիզվող հայութեան շահերի պաշտպանութիւնը երկրորդական տեղ էր զբաղում: Մեծ տերութիւններն առաջնորդվում էին պետական շահի թելադրանքով:

## ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

(1920 թ. հուլիս—հոյեմբեր)

1918 թ. մայիսից, երբ Անդրկովկասում առաջացան երեք անկախ պետություններ՝ Վրաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը, որոշ երկրամասեր, որանց թվում նաև Զանգեզուրը, դարձան վիճելի՝ համապատասխան պետությունների միջև: Ադրբեջանի կառավարությունը Զանգեզուրը համարում էր իր պետության անբաժան մասը: Այդ հարցը լուծելու համար հարևան պետությունները դիմել են ինչպես դիվանագիտական միջոցների, այնպես էլ ռազմական ընդհարումների, որոնք որևէ վերջնական արդյունքի չեն հանգեցրել՝ կողմերի միջև ուժերի մոտավոր հավասարակշռության բերումով:

Ուժերի այդպիսի փոխհարաբերությունը կտրուկ խախտվեց 1920 թ. ապրիլին, երբ Ադրբեջանը, խորհրդայնանալով, ձեռք բերեց հզոր դաշնակից՝ Խորհրդային Ռուսաստանին, որի զորքերը, պաշտպանելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, 1920 թ. հուլիսի 5-ին մտան Հայաստանի Հանրապետության պետական սահմանները և զրավեցին Գորիսն ու Սիսիանը: Երկրամասում ստեղծվեց իշխանություն նոր մարմին՝ Հեղկոմ, որի անդամները դարձան Հակոբ Կամարին (նախագահ), Քրիստափոր Մկրտչյանը (քարտուղար), Միխայիլ Զալյանցը, Համբարձում Տեր-Հովհաննիսյանը և Լևոն Առուստամյանը: Հեղկոմին կից ստեղծ-

վեցին բաժիններ՝ երկրամասի սոցիալ-տնտեսական վիճակը կարգավորելու համար: Հենց հուլիսի 5-ին Հեղկոմը հրապարակեց իր առաջին հայտարարությունը, ըստ որի ամբողջ քաղաքացիական իշխանությունը Ձանգեզուրում պատկանում էր Հեղկոմին՝ որպես խորհրդային իշխանության բարձրագույն մարմին<sup>1</sup>:

Չնայած կարմիր բանակն արդեն գրավել էր Ձանգեզուրը, բայց խորհրդային կողմը դեռևս վերջնական պատկերացում չուներ, թե ինչ վարչատարածքային կարգավիճակ է ունենալու երկրամասը:

Հուլիսի 8-ին կոմկոմսյան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում ՌՍՖՍՀ ազգությունների գործերի ժողկոմ Ստալինը նշում է, որ չի կարելի անընդհատ խուսանավել կողմերի միջև, պետք է պաշտպանել կողմերից մեկին, ներկա պայմաններում՝ Ադրբեյջանին՝ Թուրքիայի հետ միասին<sup>2</sup>:

Այլ կարծիք ուներ Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինը: Հուլիսի 9-ին հեռագրելով Օրջոնիկիձեին, նա տարակուսում էր այն փաստի առթիվ, որ իրենց անընդհատ հիշեցնում են, թե առանց Ձանգեզուրի և Ղարաբաղի Բաքվում կիսարկվեն խորհրդային կարգերը: Առարկելով դրան, Չիչերինը եզրակացնում էր, որ եթե խոսքը վերաբերում է խորհրդային իշխանության ազդեցության տարածմանը, ապա, դրա համար բավական է նաև ռուսական խորհրդային զորքերի առկայությունը: Հակառակ դեպքում, շարունակում է նա, այդ միացումը կնպաստի մահմեդական-ազգայնամոլների նվաճողական ձգտումներին և, փաստորեն, ՌՍՖՍՀ-ն կնմանվի մուսավաթական Ադրբեյջանին<sup>3</sup>:

Հուլիսի 14-ին, Օրջոնիկիձեին և Անդրկովկասում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեզրանը Բաքվից հեռագ-

1 ՀՀ ՀՔԿԳ ԿԳԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 158, ք. 1:

2 Нагорный Карабах в 1918—1923 гг. Сборник документов и материалов. Ереван, 1992, с. 524.

3 Նույն տեղում, էջ 528:

բելով Չիչերինին, վիճելի տարածքների նկատմամբ արտահայտեցին այլ տեսակետ, ըստ որի Ղարաբաղը միացվում էր Ադրբեջանին, Նախիջևանը, Շարուր-Ռարալագյազը և Օրդուբադը՝ Հայաստանին, իսկ Ջանգեզուրը համարվում էր վիճելի<sup>4</sup>:

Այսպիսով, քաղաքական-դիվանագիտական գործունեության մեջ զբաղվող գործիչները՝ հանձինս Չիչերինի, Լեգրանի և Օրջոնիկիձեի, Ջանգեզուրի հարցը դիտում էին ՌՍՖՍՀ արեւելեյան քաղաքականութեան համալիրում:

Ադրբեջանի պաշտոնական տեսակետն արտահայտվեց հուլիսի 15-ին Բաքվում կայացած Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի բյուրոյի նիստում, որին մասնակցում էին Նարիմանովը, Միկոյանը, Լեգրանը, Օրջոնիկիձեին, Հուսեյնովը, Կարաևը, 11-րդ Կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի ներկայացուցիչները և ուրիշներ: Բյուրոն որոշեց Ղարաբաղը և Ջանգեզուրը միացնել Ադրբեջանին, առաջարկել ռուսական բանակին գրավել Նախիջևանը և մյուս տարածքները: Միաժամանակ Լեգրանին առաջարկվեց խաղաղութեան պայմանագիր չկնքել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան հետ, մինչև Հայաստանի ներքին իրավիճակի մասին ամբողջական տեղեկութեւնների ստացումը<sup>5</sup>:

Ադրբեջանի ղեկավարութեան նման վերաբերմունքը բացատրվում էր շատ պարզ. դա ազգայնական մոտեցում էր, որը չէր փոխվել այնտեղ խորհրդային կարգեր հաստատվելուց հետո էլ: Իսկ 11-րդ բանակի հրամկազմն Ադրբեջանին նայում էր զուտ ՌՍՖՍՀ դաշնակցի տեսանկյունից, որին որպես խորհրդային երկիր, անհրաժեշտ էր օգնել, իսկ «միջազգային իմպերիալիզմի դաշնակից» Հայաստանին՝ ճշնշել:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 537:

<sup>5</sup> Նույն տեղում:

Այսպիսով, ի հայտ եկան հարցի լուծման երկու տարբեր մոտեցումներ:

Հարցի կարգավորման երկու տարբերակներն էլ սպառնում էին Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը, ուստի Հայաստանի կառավարությունը չէր կարող հանդուրժել դրանց իրականացումը, ինչպես նաև խորհրդային զորքերի ներկայությունը Ջանգեզուրում: Այդ պատճառով 1920 թ. հուլիսի 12-ին, երբ Հայաստանի կառավարության նախագահ Հ. Օհանջանյանը հեռագրեց Չիչերինին, նա ռուսական զորքերի մուտքը Ղարաբաղ և Ջանգեզուր դիվանագիտորեն վերագրեց 11-րդ բանակի հրամկազմի՝ Հայաստանի Հանրապետության սահմաններին ծանոթ չլինելու հանգամանքին, հույս հայտնելով, որ կարմիր զորամասերը դուրս կգան տարածաշրջանից, և բոլոր վիճելի հարցերը կլուծվեն հայ-ադրբեջանական կոնֆերանսում<sup>6</sup>: Հայաստանի կառավարությունը լավ էր հասկանում, որ ռուսական զորքերը կանխամտածված են մտել Ջանգեզուր, բայց շունենալով համապատասխան ռազմատնտեսական հզորություն, ստիպված էր շտեյլ հարաբերությունները ՌՍՖՍՀ-ի հետ և փորձում էր դիվանագիտորեն լուծել վիճելի տարածքների հարցը:

Չիչերինն իր հերթին, շքանկանալով սրել հայ-ռուսական հարաբերությունները, Հ. Օհանջանյանին ուղղված պատասխան հեռագրում, 1920 թ. հուլիսի 20-ին, կարմիր բանակի մուտքը երկրամաս փորձեց բացատրել հայ-ադրբեջանական ազգամիջյան բախումներ թույլ շտալու ձգտումով, որը, ռակայն, հայկական կողմի համար համոզիչ փաստարկ չէր<sup>7</sup>:

Գիտակցելով, որ իրեն չի հաջողվի ստիպել ՌՍՖՍՀ կառավարությանը՝ դուրս բերել իր զորամասերն այդ երկրամասից, Հայաստանի կառավարությունն աշխատեց ռուս-հայկական բանակցություններում հասնել համաձայնության ինչպես վիճելի տարածքների, այնպես էլ Ջանգեզուրում գտնը-

6 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 278, ց. 1, գ. 38, թ. 122:

7 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 179:

վող Կարմիր բանակի զորամասերի իրավական կարգավիճակի և գործունեության վերաբերյալ:

Մոսկվայում տեղի ունեցող բանակցութիւնների ընթացքում Չիչերինը հայկական կողմին առաջարկել էր Օրջոնիկիձե-Լեգրան տարբերակը: Հուլիսի 19-ին Չիչերինը հեռագրով Օրջոնիկիձեին և Լեգրանին տեղեկացնում էր, որ հայկական պատվիրակութիւնը լիազորված չէ այդպիսի տարածքային զիջումներ անելու, ուստի այդ հարցերով բանակցութիւնները պետք է վարվեն միայն Հայաստանի Հանրապետության կառավարութիւնի հետ<sup>8</sup>:

Բանակցութիւնների ժամանակ Զանգեզուրում վերսկզբեցին ռազմական գործողութիւնները: Դրոն, որն իր էքսպեդիցիոն ջոկատով նահանջել էր Դարալագյազ, հուլիսի վերջին անցավ հարձակման՝ ունենալով 200 հեծյալ և 200 հետևակային զինվոր, ինչպես նաև 8 հրանոթ: Կարմիր բանակի զորամասերը ստիպված էին հուլիսի 31-ին թողնել Բազարչայ գյուղը, օգոստոսի 1-ին՝ Անգեղակոթը և օգոստոսի 2-ին՝ Գորիսը:

Կարմիր բանակի զորամասերը հետ նահանջեցին դեպի Զաբուղի ձոր: Նրանց նահանջելուց առաջ, օգոստոսի 2-ի գիշերը, Զանգեզուրի Չեկայի հրամանով գնդակահարվեցին Հայաստանի Հանրապետութիւնի պառլամենտի անդամներ Արշակ Շիրինյանը և Վահան Խորենին, ինչպես նաև Զաքար Տեր-Ղազարյանը և Միխայիլ Ադամյանը: Գնդակահարութիւնների մասին տեղյակ պահվեց տեղի բնակչութիւնը<sup>9</sup>: Բացի նրանցից, Գորիս-Շուշի ճանապարհի Մակեր կոչված վայրում, Արմենակ Ղարաբոգյանի հրամանով, գնդակահարվեցին նաև Զաքար Տեր-Ղազարյանը (Որոտանի կոմիսար), Սաքո Յապոնը, Փարսաղան Մելիք-Փարսաղանյանը և ուրիշներ (17 պետական-քաղաքական գործիչներ)<sup>10</sup>: Օգոս-

8 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1100, ք. 1:

9 Լեւոնահայաստանի հերոսամարտը, Երևան, 1991, էջ 66:

10 Արյունոտ գիրք, Գորիս, 1921, էջ 22:

տասի 7-ին Հ. Օհանջանյանը բողոքի հեռագրեր ուղարկեց Չիչերինին, Կիրովին, Լեգրանին: Գնդակահարությունների նախաձեռնողները, հավանաբար, 11-րդ Կարմիր բանակի հատուկ բաժնի աշխատակիցները և տեղացի բուլշևիկներն էին, որովհետև Չիչերինը Լեգրանին և Կիրովին ուղղված հեռագրերում պահանջում էր մանրամասն զեկուցել այդ իրադարձությունների մասին:

Չնայած 11-րդ Կարմիր բանակի զորամասերը նահանջել էին, բայց նրա հրամկազմն ուժերի վերախմբավորում էր կատարում՝ նախապատրաստվելով հակահարձակման: Իսկ մինչ այդ, 11-րդ բանակի բարձրագույն և միջին հրամանատարական կազմը սկսեց վերջնագրային լեզվով խոսել Դրոյի և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրամանատարութայան հետ: Օգոստոսի 1-ին Ռուսաստանի 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին վերջնագիր ներկայացրեց Դրոյին՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում հետքաշել զորքերը իրենց նախնական դիրքերը: Նա զգուշացրեց նաև, որ եթե պատասխան չստացվի կամ պատասխանը չբավարարի իրենց, ապա կանցնեն վճռական հակահարձակման<sup>11</sup>: Նույն օրը 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոն և ռազմահեղափոխական խորհրդի անդամ Լուկինը նմանատիպ վերջնագիր ներկայացրին Հայաստանի Հանրապետության զորքերի հրամանատարությանը: Նրանք պահանջեցին մինչև օգոստոսի 5-ը դադարեցնել ռազմական գործողութայունները, հակառակ դեպքում սպառնում էին Կարմիր բանակի պատասխան քայլերով<sup>12</sup>:

Վերջնագրերի լեզվից պարզ էր դառնում, որ Կարմիր բանակի հրամանատարական կազմը պատրաստվում էր ռազմական գործողութայունների, անկախ պատասխանի բովանդակութայունից: Այդ վերջնագրերը մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ ՌՍՖՍՀ արտոնղկոմատի և 11-րդ Կարմիր բանակի տեսակետները վիճելի տարածքների մասին տարբեր էին:

11 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 106, ք. 1, 2:

12 Նույն տեղում, գ. 104, ք. 1:

Վերջնագրերի կապակցությամբ Հ. Օհանջանյանը օգոստոսի 3-ին բողոքի հեռագիր ուղարկեց Չիչերինին, նշելով, որ Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մասին Ռուսաստանի հայտարարությունները ամբողջովին տարբերվում են խորհրդային զորքերի առանձին հրամանատարների վերջնագրերից: Նա հույս էր հայտնում, որ ՌՍՖՍՀ կառավարությունը կվերացնի հակասությունը՝ Օգոստոս Հայաստանի հետ բարեկամական պայմանագիր կնքելու<sup>13</sup>, խորհրդային բանակի հրամանատարական կազմի վերջնագրերից դժգոհ էր անգամ կեզրանը: Օգոստոսի 6-ին հեռագրելով Ռոստով՝ Կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհրդին, նա մասնավորապես հայտնում էր, որ 11-րդ բանակի հրամկազմը սկսել է զբաղվել ինքնուրույն քաղաքականությունով և վերջնագրեր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ղեկավարությանը, այսինքն՝ բանակի հրամանատարական կազմը դուրս է գալիս իր իրավասություններից: Նա Կովկասի ռազմահեղափոխական խորհրդի կողմից պահանջում էր 11-րդ բանակի հրամանատարական կազմին տեղյակ պահել այն մասին, որ Հայաստանի կառավարության հետ բոլոր կապերը պետք է կայանան միայն Հայաստանի Հանրապետությունում ՌՍՖՍՀ լիազորի միջոցով<sup>14</sup>:

Մինչ շարունակվում էին դիվանագիտական հայտագրերի փոխանակումները կողմերի միջև, Զանգեզուրում ծավալվում էին ռազմական գործողություններ:

Օգոստոսի 3-ին ուժեղ մարտեր էին ընթանում Տեղ գյուղի համար: Գյուղի հարակից բարձունքները գտնվում էին հայկական ուժերի հսկողության տակ, իսկ Կարմիր բանակի ստորաբաժանումներն անհաջող փորձեր էին անում զբաղվելու բարձունքները: Օգոստոսի 4-ին Կարմիր բանակի ստորաբաժանումները կրկին երկու անհաջող փորձ կատարեցին:

18 ՀՀ ԳԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թթ. 220—223:

14 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 115, թ. 1:

Ռազմական գործողութիւնների ակնատեսն է. Միրաբ-  
յանը, որը Դրոյի խնդրանքով մինչև Զաքար Յուլյանի գալը  
ղեկավարում էր Զանգեզուրի ժամանակավոր վարչութիւնը,  
տեղեկութիւններ է հայտնում հայկական ուժերի թուլութիւն,  
անմարտունակութիւն մասին, թեև որոշ ջոկատներ կատաղի  
դիմադրում էին<sup>15</sup>:

Օգոստոսի 6-ին Կարմիր բանակի զորամասերին հաջող-  
վեց դուրս մղել Դրոյին Խնձորեսկ և Տեղ գյուղերի վրա իշխող  
բարձունքներից և, շարունակելով հակահարձակումը, օգոս-  
տոսի 9-ին գրավել Գորիսը<sup>16</sup>:

Չնայած ռազմական գործողութիւններին, շարունակվում  
էին հայ-ռուսական բանակցութիւնները: Դրանք ավարտվե-  
ցին 1920 թ. օգոստոսի 10-ի համաձայնագրի կնքմամբ, ըստ  
որի կողմերի միջև դադարեցվում էին ռազմական գործողու-  
թիւնները, իսկ վիճելի տարածքները՝ Նախիջևանը, Զանգե-  
զուրն ու Ղարաբաղը ժամանակավորապես զբաղեցնելու էին  
ռուսական զորքերը: Համաձայնագիրը չէր կանխորոշում այդ  
տարածքների ապագա պատկանելիութիւնը կողմերից որևէ  
մեկին, այլ միայն նպատակ ուներ նպաստավոր պայմաններ  
ստեղծել խաղաղ միջոցներով վեճը լուծելու համար:

Համաձայնագիրը Հայաստանի համար դրական էր այն-  
քանով, որ ձախողում էր Ադրբեջանի ղեկավարութիւնն ձգ-  
տումը՝ տիրել Ղարաբաղին, չնայած, իր հերթին, Հայաս-  
տանն էլ ստիպված էր Զանգեզուրը դիտել որպես վիճելի տա-  
րածք: Դրական էր նաև այն, որ վիճելի տարածքների հարցը  
լուծվելու էր հայ-ռուսական հաշտութիւն պայմանագրի հի-  
մունքներով: Հայաստանը հույս ուներ ավելի օբյեկտիվ և  
նպաստավոր պայմանագիր կնքել Ռուսաստանի հետ, որի  
տեսակետը Զանգեզուրի հարցում տարբերվում էր Ադրբեջանի  
տեսակետից: Հայաստանի համար ձեռնառու էր նաև ռազմա-  
կան գործողութիւնների դադարեցումը, որովհետև դրանք

15 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 155:

16 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 112, թ. 1:

մեծ վնաս էին հասցնում Հայաստանի տնտեսությանը, որն առանց այդ էլ վատթար վիճակում էր:

Ըստ համաձայնագրի, Հայաստանի Հանրապետության ղինված ուժերի ղեկավարությունը Դրոյին և Զանգեզուրի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Գարեգին Նժդեհին հրամայեց հեռանալ Զանգեզուրից: Սակայն նրանք տարբեր մոտեցումներ դրսևորեցին հրամանի նկատմամբ: Եթե Դրոն հակված էր անխոս կատարել հրամանը, ապա Նժդեհի մոտ առաջացել էին տարաբնույթ հարցեր, որոնք պատասխանի կարիք ունեին: Որոշ հարցերի պարզաբանման համար Նժդեհը օգոստոսի 13-ին Հայաստանի վարչապետին և զորքերի հրամանատար Նազարբեկովին ուղղեց գրություն, որտեղ մասնավորապես շեշտում էր մի քանի հարցեր. ի՞նչ է լինելու Գողթան գավառի դրությունը, որը շեք մտնում Զանգեզուրի վարչական սահմանի մեջ, ի՞նչ երաշխիք կա, որ թշնամին տեր չի դառնա Կապարգողթի շորս ապստամբ շրջաններին<sup>17</sup>, Նժդեհը հրաժարվեց լքել Զանգեզուրը:

Համաձայնագրի կնքումից հետո հաստատվեց խորհրդային իշխանություն: Տեղական իշխանության մարմինները և Կարմիր բանակի զորքերի հրամկազմը հաճախ բնակչության նկատմամբ կիրառում էին բռնագրավումների, անօրինական ձերբակալությունների և գնդակահարությունների քաղաքականություն: Դա ժողովրդի մեջ առաջացնում էր բողոքի ալիք, որը կարող էր պոռթկալ:

Չնայած կնքված համաձայնագրին, օգոստոսի 15-ին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովը Օրջոնիկիձեի հետ հեռուառազրույցում պնդում էր Ղարաբաղն ու Զանգեզուրը կցել Ադրբեջանին, այդ տարածաշրջանը դարձնել հենակետ Հայաստանի դեմ խորհրդային քարոզչություն տանելու համար<sup>18</sup>, Միաժամանակ, Ադրբեջանի կառավարությունն առաջարկեց օգոստոսի 20-ին հրավիրել հայ-ադրբ-

17 Լեւոնհայաստանի հերոսամարտը, էջ 68:

18 Нагорный Карабах в 1918—1923 гг., с. 577.

բեղանական կոնֆերանս: Բայց, քանի որ ըստ օգոստոսի 10-ի համաձայնագրի հայ-ադրբեջանական վիճելի տարածքների հարցի լուծումը կայանալու էր ռուս-հայկական համաձայնագրի հիմունքներով, ուստի օգոստոսի 22-ին Հ. Օհանջանյանը Ադրբեջանին տվեց մերժողական պատասխան:

Ձանգեզուրի մի մասը՝ Կապարգողթը, դեռևս դուրս էր Կարմիր բանակի հսկողութունից և բանակի հրամկազմը լավ էր հասկանում, որ Ձանգեզուրում իրենց դիրքերն ամուր շքն կարող լինել այնքան ժամանակ, քանի դեռ գոյութուն ունի ապստամբ Կապարգողթը: Ուստի նա ծրագրեց ապստամբ շրջանի գրավումը:

1920 թ. սեպտեմբերի 1-ին մոտ 3000 կարմիրբանակայիններ հարձակվեցին Խոտանան և Զեյվա գյուղերի, ինչպես նաև ռազմավարական նշանակութուն ունեցող Ինջաբել լեռան ուղղությամբ<sup>19</sup>:

Ստեղծված պայմաններում տեղի բնակչության կարծիքն իմանալու համար 1920 թ. սեպտեմբերի 6-ին Կալերում տեղի ունեցավ ժողով՝ Գենվազի 13 գյուղերի 2-ական ներկայացուցիչների մասնակցությամբ, որը որոշեց կռվել մինչև վերջ<sup>20</sup>:

Կարմիր բանակի զորամասերին հաջողվեց սեպտեմբերի 8-ին գրավել Ղափանը, որտեղ ստեղծվեց Հեղկոմ՝ Բագրասու Հարությունյանի գլխավորությամբ: Կատաղի մարտերը տեղափոխվեցին Արևիկի (Մեղրու) շրջան, որտեղ Կարմիր բանակը, հանդիպելով ուժեղ դիմադրության, նահանջեց:

Սեպտեմբերի վերջերին և հոկտեմբերին Կարմիր բանակի զորամասերը նորից փորձեցին գրավել շրջանը, բայց նրանց բոլոր հարձակումներն ավարտվեցին անհաջողությամբ:

Ապստամբների հաղթանակները մեծ ոգևորությամբ ընդունվեցին ինչպես տեղական բնակչության շրջանում, այնպես էլ Պարսկաստանի հյուսիսում, որտեղ բուլշևիկների կող-

19 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. Մ, գ. 441, թ. 170:

20 Լեոնահայաստանի հերոսամարտը, էջ 77:

մից հրահրված Շիրինդիլ խանը ապստամբություն էր բարձրացրել Արշադ խանի դեմ: Սյունիքի անկումն առավել կծանրացնե՞ր Պարսկաստանի հյուսիսի քաղաքական իրավիճակը, ուստի պատահական չէր սեպտեմբերյան հաղթանակներից հետո Պարսկաստանի ներկայացուցիչ Մութալիմ Սահրանկի խանի ժամանումը Կարճևան՝ Նժդեհին շնորհավորելու համար: Պարսկաստանի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց, ըստ որի Նժդեհին տեղյակ էին պահելու Օրդուբադում կատարվող ադրբեջանական գործողությունների մասին:

Գ. Նժդեհին հաջողվեց ոչ միայն հաջող դիմադրություն կազմակերպել, այլև ապստամբություն բարձրացնել Ղափանում: Ապստամբները հոկտեմբերին ազատագրեցին Ղափանը: Նժդեհի ձեռքն ընկավ մեծ քանակությամբ ռազմամթերք, ինչպես նաև հակառակորդի արխիվը<sup>21</sup>: Մի քանի օր անց, հոկտեմբերի 12-ին, ապստամբից Սիսիանի բնակչությունը՝ Պողոս Տեր-Գավթյանի գլխավորությամբ, և հոկտեմբերի 14-ին ազատագրվեց նաև այդ շրջանը: Ապստամբների կողմից ձերբակալվեցին և գնդակահարվեցին Բ. Հարությունյանը, Քրիստափոր Մկրտչյանը, Մեղրու շրջանի չկայացած Հեղկոմի նախագահ Համբարձում Համբարձումյանը, Աղալո Իսաղուլյանը և ուրիշներ:

Փորձելով մարել ապստամբության այլքը, 11-րդ բանակի հրամանատարությունը հոկտեմբերի 14-ին Զանգեզուրում հայտարարեց ռազմական դրություն և մտցրեց պարետային ժամ, որի խախտողներին գնդակահարելու էին տեղում՝ առանց դատի<sup>22</sup>: Հոկտեմբերի 16-ին Նեստերովսկին կոչ արեց Զանգեզուրի բնակչությանը՝ առաջարկելով դադարեցնել ապստամբությունը և ցրվել տները: Հակառակ դեպքում սպառնում էր սպանության և ավերումներով<sup>23</sup>,

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>22</sup> ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 138, թթ. 1, 2:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 142, թ. 8:

Չնայած հրամանների դաժանությանը, նեստերովսկուն շհաշողվեց ճնշել ապստամբներին: 11-րդ Կարմիր բանակի հրամանատարական կազմը, ցանկանալով համակարգել Ջանգեզուրի և Ղարաբաղի զորամիավորումների գործողությունները, հոկտեմբերի 25-ին դրանք միավորեց Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի ակտիվ մասնակից Կուրիշկոյի հրամանատարության տակ: Առաջին հրամանով նա այդ զինվորական ստորաբաժանումներից ստեղծեց Ջանգեզուրի հարվածային խումբ: Ավարտելով ուժերի վերախումբավորումը, նա պատրաստվեց անցնել լայնածավալ հարձակման հոկտեմբերի 31-ին:

Ռազմական գործողություններին զուգընթաց Երևանում շարունակվում էին բանակցությունները հայ-ռուսական պայմանագրի նախագծի շուրջ: Բանակցությունների արդյունքը եղավ 1920 թ. հոկտեմբերի 28-ին կողմերի միջև կնքված արձանագրությունը, որտեղ որոշված էին այն պայմանները, որոնք կատարելու շնորհիվ միայն հնարավոր կլիներ կնքել հայ-ռուսական պայմանագիրը, որի նախագիծը պատրաստ էր: Այդ պայմանների համաձայն, ՌՍՖՍՀ և ԱդրՍՍՀ կառավարությունները ճանաչելու էին Նախիջևանի և Ջանգեզուրի անցումը Հայաստանին, դուրս բերելով իրենց զորքերն այդ տարածաշրջանից: Իր հերթին Հայաստանը պարտավորվում էր հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ տարածքային հավակնություններից: Արձանագրությունը ընդունելի էր Հայաստանի համար, որքանով ռուսական կողմը պարտավորվում էր ճանաչել Ջանգեզուրի և Նախիջևանի պատկանելիությունը Հայաստանին:

Արձանագրության նկատմամբ խիստ բացասական վերաբերմունք ցուցաբերեցին Ադրբեջանի կուսակցական և պետական ղեկավարները, ինչպես նաև ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի անդամները:

Արձանագրությունը շկանգնեցրեց Կուրիշկոյի Ջանգեզուրյան հարվածային խմբի նոյեմբերի 3-ի հարձակումը, որի նպատակն էր Ղափանի վերանվաճումը: Սակայն Կուրիշկո-

յին հաջողվեց դրավել միայն Արծվանիկ ու Յայջի գյուղերը, որոնք մի քանի օր անց կրկին անցան ապստամբների ձեռքը:

Ըստ Կուրիշկոյի, իրենց պարտության պատճառը եղանակի կտրուկ վատթարացման պայմաններում լեռնանցքների դժվարամատչելի դառնալն էր, ինչպես նաև բանակայինների մոտավորապես 70 տոկոսի ոչ մարտունակ լինելը: Այդ պատճառով զանգեզուրյան հարվածող խմբի հրամանատարութունը ստիպված էր դադարեցնել հետագա առաջխաղացումը և փորձել պահել գրավված տարածքը:

Հենվելով ռազմական հաջողութունների վրա, Գ. Նրժդեհը նոյեմբերի 14-ին Կարմիր բանակի հրամկազմին վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով հեռանալ Զանգեզուրից<sup>24</sup>: Ի պատասխան այդ վերջնագրի, Կարմիր բանակի զորամասերը վերսկսեցին ռազմական գործողութունները, որոնք անարդյունք շարունակվեցին մինչև նոյեմբերի 20-ը: Նոյեմբերի 21-ին ապստամբները, իսկ 22-ին՝ Նժդեհը մտան Գորիս:

Ազատագրված Զանգեզուրում Գ. Նժդեհի ղեկավարությամբ ստեղծվեց գյուղացիական ժամանակավոր խորհուրդ՝ որպես իշխանության բարձրագույն մարմին<sup>25</sup>:

Դեպի Ղարաբաղ նահանջած Կարմիր բանակի զորամասերի հետ հեռացավ տեղական կոմունիստների մի մասը, մյուսները մնացին Զանգեզուրում՝ ընդհատակյա գործունեության համար:

Կարմիր բանակի պարտութունը ստիպեց 11-րդ բանակի հրամկազմին կատարել կադրային փոփոխություններ: 11-րդ բանակի հրամանատար Հեկկերի՝ 22. 11. 1920 թ. № 712 հրամանի համաձայն, ապստամբութունը ճնշել ղարողանալու և հատկապես հոկտեմբերի անհաջող մարտերի համար իրենց պաշտոններից ազատվեցին 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին, նույն դիվիզիայի կոմիսար

24 Լեռնահայաստանի հերոսամարտը, էջ 106:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 108:

Քերեթկոն և ուրիշներ: Ի պատասխան այդ հրամանի, դեկտեմբերի 2-ին Նեստերովսկին ընդարձակ ղեկուցագիր ներկայացրեց 11-րդ բանակի հրամանատարութեանը, որտեղ տրվում էին ապստամբութեան հաղթանակի պատճառները: Նա ապստամբների հաջողութունը բացատրում էր մի քանի ամիս շարունակ կոմունիստների և բանակի կողմից Զանգեզուրում վարած սխալ քաղաքականութեամբ, որը բնակչութեանը ստիպել էր դիմել ապստամբութեան:

28-րդ դիվիզիայի նոր հրամանատար Սեմյոնովը նոյեմբերի 26-ին Նժդեհին առաջարկեց դադարեցնել ռազմական գործողությունները և սկսել բանակցություններ: Առաջարկն ընդունվեց Նժդեհի կողմից:

Սակայն մի քանի օր անց, 1920 թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանը խորհրդայնացավ և իշխանությունն անցավ բոլշևիկներին: Այդ նոր քաղաքական իրադրությունը Զանգեզուրի ազատագրական շարժման ուղին դրեց նոր հունի մեջ:

ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ  
ՀԱՐՑՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սևրի դաշնագիրը (1920 թ. օգոստոսի 10) հայկական հարցի երկարամյա պատմության ամենաուշագրավ դրվագներից է: Չնայած կարծիքների հակասականությանը՝ այն լայն արձագանք գտավ հայ քաղաքական կյանքում և մեծ ազդեցություն ունեցավ հայ քաղաքական բոլոր հոսանքների վրա:

Սևրի դաշնագիրը հայկական հարցի պատմության մեջ ոչ միայն հերթական փուլ էր, այլև առանձնահատուկ էր իր հողվածների բովանդակությամբ և սպասվելիք հետևանքներով: Ճիշտ է, այդ դաշնագիրը ըստ էության չլուծեց Թուրքիայի և Հայաստանի հակամարտության խնդիրը, սակայն Եվրոպան վերջապես եթե ոչ ամբողջությամբ, զոնե զգալիորեն խորտակեց Թուրքական բռնատիրությունը: Սա ինքնըստինքյան մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր, քանզի մինչ այդ Եվրոպան հնարավոր և անհնարին բոլոր միջոցներով սնուցել և աճեցրել էր Թուրքական պետականությունը, ինչպես իրավացիորեն նշում է ականավոր պատմաբան Ն. Ադոնցը. «Իր իսկ սեփական քաղաքակրթության կրճեթին»<sup>1</sup>:

Թուրքիայի հետ հաշտության դաշնագրի շուրջ դիվանագիտական աշխատանքները սկսվեցին 1919 թվականին,

1 Ն. Ադոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1939, էջ 13:

սակայն եվրոպական տերությունների մրցակցության պայ-  
մաններում այն ղգալիորեն ձգձգվեց: Նախապատրաստական  
աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Ավ.  
Ահարոնյանի գլխավորած Հանրապետական և Պողոս Նու-  
բար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունները:

Առաջին կարևոր փուլը 1920 թ. փետրվար-մարտի կոն-  
դոնի կոնֆերանսն է: Այդտեղ հայերը ներկայացրեցին իրենց  
պահանջները. Վանի նահանգ՝ առանց Հեքիարի գավառի,  
Բիթլիսի նահանգ՝ առանց Սղերդի գավառի, էրզրումի և  
Խարբերդի նահանգները, Դերսիմի գավառը և ելք դեպի Սև  
ծով: Իսկ Կիլիկիայի համար պահանջում էին ֆրանսիական  
հովանավորություն: Միաժամանակ նշվում էր, որ 800 հա-  
զար հայ գաղթականներ պատրաստ են վերադառնալ իրենց  
երկիրը<sup>2</sup>: Ավելորդ շենք համարում ավելացնել, որ այս կոն-  
ֆերանսի առթիվ Ավ. Ահարոնյանն իրավացիորեն նշել է,  
թե շահագրգռված պետությունների մրցակցությունը պատ-  
ճառ դարձավ մեր հարցի լուծումը ձգձգելու<sup>3</sup>:

Դաշնագրի մշակման հաջորդ կարևոր փուլը 1920 թ.  
ապրիլի 18—26-ի Սան-Ռեմոյի կոնֆերանսն է, ուր վերջ-  
նական տեսքի բերվեց ապագա դաշնագրի նախագիծը<sup>4</sup>:  
Սան-Ռեմոյում էրզրումը Հայաստանին միացնելու հարցը  
փաստորեն Դ. Լյուդ Ջորջի, Ֆ. Նիտտիի և Ֆ. Յոշի առար-  
կություններից հետո օրակարգից հանվեց: Ըստ մարշալ  
Ֆ. Յոշի միայն Հայաստանի գրավման համար անհրաժեշտ  
էր շորս դիվիզիա (60 հազար զինվոր), որը ոչ մի տերու-  
թյուն ցանկություն չուներ տրամադրել: Այս կապակցու-  
թյամբ բացահայտելով բրիտանական կայսերապաշտության  
իրական վարքը, Դ. Լյուդ Ջորջն ասաց. «Եթե հայերն ի վի-

2 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 74—77, 81—82: Ահարո-  
նյան Ավ., Սարդարապատից մինչև Սեւր և Լոզաննա, Պոսթըն, 1943,  
էջ 44—51:

3 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 215, թ. 1:

4 Հայաստանը միջազգային դիվանագիտության... և սովետական ար-  
տարին քաղաքականության փաստաթղթերում, էջ 612—671:

ճակի շին պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նման ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարութիւններից ոչ մեկը, այս պարագաներում, պատրաստ չի լինի օգնելու նրանց անգամ միայն մեկ գումարտակով»<sup>5</sup>:

Իսկ ճշմարտութիւնն այն է, որ հայերը համապատասխան զենքի և հանդերձանքի առկայութեան դեպքում ի զորու էին պաշտպանել իրենց երկիրը: Հայ պատվիրակները հավաստեցին, որ մարտնչելու համար պատրաստ են մինչև 40 հազար հայեր:

Այսպիսով, Եվրոպայի ղեկավարները, խոսքները կարծես մեկ արած, բազմիցս հայտարարեցին զինվորական ուժեր ուղարկելու հարցում իրենց երկրների անկարող լինելու մասին:

Կոնֆերանսի արդյունքների մասին Ավ. Ահարոնյանը մանրամասն տեղեկացրեց Հանրապետութեան ԱԳՆ-ին՝ մատնանշելով հատկապես էրզրումի բացառման ցավալի փաստը<sup>6</sup>:

Վերլուծելով կոնֆերանսի արդյունքները հայ հեղափոխական դաշնակցութեան (այսուհետև՝ ՀՀԴ) բյուրոյի խոսնակը նշում էր, որ «ճակատագրական օրեր է ապրում Հայ Դատը», միաժամանակ որոշակիորեն ավելացնելով, որ «այդտեղ էլ չլուծվեց հայկական հարցը», քանզի «Հայաստանի սահմանների խնդիրն այդպես էլ վերջնականապես չկարգավորվեց»<sup>7</sup>: Նմանատիպ մոտեցումներ ունեին նաև ռամկավար և ժողովրդական կուսակցութիւնների շրջանակները<sup>8</sup>:

Տվյալ ժամանակաշրջանում եվրոպական պետութիւնների քաղաքականութեան բնորոշ գիծը Թուրքիայի հարցում

5 Հայաստանը... փաստաթղթերում, էջ 628:

6 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 118—126:

7 «Հատուց», Երևան, 1920, հունիսի 4, թ. 115:

8 «Հայաստանի ձայն», Ե., 1920, հունիսի 6, թ. 62: «Ժողովուրդ», Երևան, 1920, մայիսի 23, թ. 84:

միասնական դիրքորոշման բացակայությունն էր: Այս համաձայնությունը հատկապես ակնառու էր անգլո-ֆրանսիական մրցակցությունների պարագայում: Միջպետական հակամարտությունները Մերձավոր արևելքում գրեթե բացառում էին թուրքիայի դեմ համատեղ գործելու հնարավորությունը: Եվրոպական դիվանագիտության քայլերը Հայաստանի նկատմամբ մասնավոր բնույթ չէին կրում: Այդ ամենն անհրաժեշտ է ընկալել ու մեկնաբանել նրանց ռազմավարական նպատակների և շահերի ենթատեքստում: Հայկական հարցը հերեք մասնավոր խնդիր չէր նրանց համար և Եվրոպան բնավ չէր առաջնորդվում հայասիրական մղումներով: Դ. Լյուդ Զորը, երբ բրիտանական շահերը պահանջում էին, մեծ պատրաստակամությամբ հարյուրավոր գումարտակներ էր ուղարկում աշխարհի տարբեր ծայրամասեր՝ առանց հաշվի առնելու վերջիններիս ցանկությունը:

Ղաշնագրի նախագիծը վերջնականապես հաստատվեց դաշնակիցների Սպայակույտի նիստում, որին մասնակցեցին նաև հայ պատվիրակները<sup>9</sup>: Որոշ առարկություններից հետո, որոնք տերությունները շքնդունեցին, Օսմանյան կայսրության սուլթանական խորհուրդը 1920 թ. հուլիսի 22-ին համաձայնվեց ստորագրել դաշնագիրը:

Հաշտության դաշնագիրը ստորագրելու համար Ավ. Ահարոնյանը լիազորված էր 1918 թ. դեկտեմբերի 7-ի թիվ 951 և 1919 թ. ապրիլի 21-ի թիվ 1098 լիազորություններով<sup>10</sup>: Ի լրումն այդ ամենի վարչապետ Հ. Օհանջանյանը 1920 թ. հունիսի 20-ի թիվ 3743 լրացուցիչ լիազորագրով Ավ. Ահարոնյանին տվեց «Իշխանություն և իրավունք» Հայաստանի Հանրապետության՝ անունից ստորագրել թուրքիայի հետ հաշտության դաշնագիրը<sup>11</sup>: Այդ արտոնագրի ստաց-

9 ՀՀ ՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 166—169, ֆ. 430, ց. 1, գ. 68, թթ. 12—14:

10 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 138:

11 Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու դարգացումը, Բէյրութ, 1968, էջ 251:

ման մասին Ավ. Ահարոնյանը տեղեկացրեց իր կառավարութ-  
յանը<sup>12</sup>: Վերջապես, 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի ար-  
վարձան Սևրում կնքվեց վաղուց սպասված դաշնագիրը<sup>13</sup>:

Սևրի դաշնագրով Թուրքիան զրկվում էր աֆրիկյան և արաբական գաղութներից: Պաղեստինը և Իրաքն անցնում էին Անգլիայի իշխանություններից, իսկ Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիայի, Դոդեկանեզը՝ Իտալիայի, իսկ Արևելյան Թրակիան, Հալլիպոլիսի թերակղզին և Իզմիրը՝ Հունաստանի: Նեղուցների շրջանը հսկելու էր Անտանտի հանձնաժողովը: Թուրքիայից անջատվելու էր նաև Քրդստանը, որի սահմանները պետք է ճշտվեին հետագայում:

Մեզ համար առանձնապես կարևոր են Հայաստանին վերաբերող հոդվածները: Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն: Երկու պետությունները, ինչպես և Մեծ տերությունները համաձայնվում և ընդունում են էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում ԱՄՆ-ի նախագահի կատարելիք սահմանագծումը: Թուրքիան հայտարարում է, որ սահմանների որոշման օրից սկսած հրաժարվում է հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից: Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները պետք է որոշվեին նրանց ընդհանուր համաձայնությամբ: Իսլամացված ոչ մահմեդականները վերադարձվում էին նախկին կրոնին, իսկ հայկական ջարդերի բոլոր մասնակիցները պետք է մեկուսացվեին: Հայաստանին տրվում էր ազատ ելք դեպի Սև ծով՝ Բաթումի և Տրապիզոնի նավահանգիստներով:

Հայաստանի սահմանների բարձիթողի վիճակը ստեղծում էր անորոշ դրություն: Այդ ամենի պատճառն այն էր, որ եվրոպական տերությունները շղանկացան սեփական միջոցներով որոշել և ապահովել Հայաստանի սահմանները

12 ՀՀ ՊԿԱ, ֆ. 200, ց. 1, դ. 290, թ. 169.

13 Հայաստանը... փաստաթղթերում, էջ 672—683.

անձեռնմխելիութունը: Գրա համար էլ նրանք հարցի լուծու-  
մը բարդեցին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի սահմաններին, լավ  
հասկանալով, որ վերջինս ևս ի վիճակի չէր ապահովել ապա-  
գա Հայաստանի ամբողջականութունը: Նա դեռևս մայիսի  
17-ին համաձայնվել էր միջնորդ լինել Հայաստանի սահ-  
մանների որոշման գործում և 1920 թ. նոյեմբերի 22-ին բա-  
վականին ուշացած հռչակեց իրավարարական վճիռը<sup>14</sup>:  
Մինչ այդ ԱՄՆ-ի սենատը մերժել էր Հայաստանի մանդատի  
ընդունումը: Հետագայում, հայ ժողովրդի համար ճակատա-  
գրական պահին ամերիկյան հյուպատոս Մոզերը պաշտոնա-  
պես պետք է հայտնեք, որ ԱՄՆ-ը Սևրի դաշնագիրը չի ստո-  
րագրել և պատասխանատու չէ Հայաստանի դրության  
համար<sup>15</sup>:

Փաստորեն Վ. Վիլսոնի վճռով Հայաստանի մաս պետք  
է կազմեին Վանի նահանգից Վանի գավառը, Բիթլիսի նա-  
հանգից՝ Բիթլիս և Մուշի գավառները, գրեթե ամբողջ էր-  
զրոումի նահանգը, Տրապիզոնի գավառը և Գյումուշհանեի  
արևելյան մասը:

Ինչ վերաբերվում է քեմալականներին, ապա նրանք  
1920 թ. հունիսի 7-ի օրենքով շեղյալ հայտարարեցին 1920 թ.  
մարտի 16-ից հետո կնքված պայմանագրերը: Հետագայում  
(1927 թ. մայիսի 21-ին) դաշնագիրը ստորագրողներին և  
Դամադ Ֆերիդի կառավարության նախարարներին զրկեցին  
Թուրքիայի քաղաքացիութունից<sup>16</sup>:

Ազգային պատվիրակությունը դաշնագրի կնքումը ող-  
ջունելով հանդերձ, այնտամենայնիվ, Գերագույն խորհրդ-  
դին բողոքեց Կիլիկիայի մեծ մասը և խորհրդի նահանգը  
Թուրքական տիրապետության տակ թողնելու դեմ<sup>17</sup>:

<sup>14</sup> The Papers Relating to Foreign Relations of United States,  
1920, vol 3, Washington, 1936, pp. 790—804.

<sup>15</sup> Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվներին», № 2, 1965, էջ 47:

<sup>16</sup> Кемаль М., Путь новой Турции, т. 4, М., 1934, с. 366:

<sup>17</sup> ՀՀ ԶԳՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 178, թ. 2:

Ի դեպ, Սևրի դաշնագրի ստորագրումից հետո Հանրապետության կառավարությունը որպես Միացյալ Հայաստանը ներկայացնող միակ օրինավոր մարմին նպատակահարմար էր համարում մեկ պատվիրակության գոյությունը՝ դաշնագրի իրագործմանը հետևելու համար<sup>18</sup>։ Իր հերթին ՀՀԴ բյուրոն այդ առումով ավելացնում էր, որ ժամանակն է դուրս գալու «մեկ ճակատով և մեկ քաղաքականությամբ» պաշտպանելով մեկ ներկայացուցչի անհրաժեշտությունը<sup>19</sup>։

Դաշնագրի ստորագրությունը համաժողովրդական խանդավառություն առաջ բերեց։ Վարչապետի կարգադրությամբ տեղական իշխանությունները դաշնագրի կնքման մասին տեղեկացրեցին բնակչությանը<sup>20</sup>։ Սևրի դաշնագրի կնքումը համարելով որպես Մեծ Հայաստանի լրացման ակտ, Գևորգ Ե կաթողիկոսը 1920 թ. օգոստոսի 29-ին էջմիածնում պատարագ մատուցեց և Հայաստանի անկախության փոխառության ֆոնդին նվիրելով 1 մլն ռուբլի՝ այդ մասին պաշտոնապես տեղեկացրեց կառավարությանը<sup>21</sup>։

Դաշնագրի կնքման կապակցությամբ Փարիզում 1920 թ. օգոստոսի 15-ին կազմակերպված պաշտոնական ընդունելության ժամանակ Ավ. Ահարոնյանը այն հանդիսավորապես հայտարարեց «դարերից հետո հայ ժողովրդի կյանքում ամենամեծ քաղաքական երևույթը»<sup>22</sup>։ Հետագայում նա օգոստոսի 10-ը համարեց «իր կյանքի ամենաերջանիկ օրը, քանզի երեսուն տարվա պայքարը, բողոքը, տառապանքը և հույսերը պսակվեցին հաջողությամբ»<sup>23</sup>։ Մանչեստրի հայկ-

18 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 31.

19 «Հառաջ», Երևան, 1920, սեպտեմբերի 21, թ. 204.

20 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 158, թ. 1.

21 ՀՀ ՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 94, թ. 12. «էջմիածին», 1920, թ. 11,

էջ 175:

22 «Վերածնունդ», Փարիզ, 1920, թ. 32—33, էջ 550.

23 Ահարոնեան Ավ., նշվ. աշխ., էջ 88.

րից ստացած գրիչը, որով ստորագրեց դաշնագիրը և կնիքը, նա նվիրեց ազգային թանգարանում պահպանելու համար<sup>24</sup>:

Սևրի դաշնագրին առնչվող վիճահարույց հարցերից է նրա ստորագրման խնդիրը՝ կապված Պողոս Նուբարի մասնակցության հետ: Ազգային պատվիրակության հաղորդագրության համաձայն Պողոս Նուբարը դաշնակիցների կողմից ևս հրավիրված էր ստորագրելու դաշնագիրը, սակայն օսմանյան պատվիրակության առարկություններից հետո հարկ համարեց չստորագրել՝ թուրքերի կողմից հետագայում բողոքի տեղիք շտալու համար<sup>25</sup>: Մյուս կողմից, ըստ պրոնուբարյան աղբյուրի, եթե նա ստորագրեր, ապա այլևս չէր կարողանա մնացած երեք նահանգների նկատմամբ պահանջատեղ լինել և Ազգային պատվիրակությունը կղաղարեցներ իր գործունեությունը<sup>26</sup>:

1920 թ. մայիսի 5-ին Փարիզում գումարված Ազգային համագումարը մեկ ձայնի առավելությունը համաձայնվել էր, որ Պողոս Նուբարը ևս ստորագրի: Իր հերթին վերջինս իր ստորագրությունը համարում էր մի տեսակ նվիրաբերում չորս նահանգները Հայաստանին կցելու սկզբունքի համար<sup>27</sup>: Հետագայում Պողոս Նուբարը Գևորգ Ծ կաթողիկոսին գրած նամակում խոստովանում էր, որ իր ստորագրությունն անշուշտ բարոյական գոհացում պետք է լիներ թրքահայերի համար, բայց հարցը մոտիկից քննելով, գտավ, որ թրքահայության համար լավագույնը եղավ Թուրքիայի ընդդիմությունից հետո իր չստորագրելը<sup>28</sup>:

Հայ ժողովրդական կուսակցությունը հանիրավի Հանրապետության կառավարությանը մեղադրում էր Պողոս Նուբարի չստորագրելու համար, որին իբր լիազոր շեն ճանա-

24 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 171:

25 «Վերածնունդ», Փարիզ, 1920, թթ. 32—33:

26 Որբունի Ս., Ինչու Պողոս փաշա Նուբար չստորագրեց դաշնագիրը, Կ. Պոլիս, 1920, էջ 15:

27 Թէրզիպաշեան Ա., Նուպար, Փարիզ, 1939, էջ 340—342:

28 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 2:

շեղ<sup>29</sup>։ Որոշ շրջաններ էլ Պողոս Նուբարի շատորագրելու դեպքում գտնում էին, որ Ավ. Ահարոնյանը չպետք է ստորագրեր դաշնագիրը՝ իբր թե թրքահայ դատը ուսահայ դատից չբաժանելու համար<sup>30</sup>։

Այս պարագայում բոլորովին անտեղի են Ավ. Ահարոնյանի հասցեին հնչող մեղադրանքները։ Նա դեռևս 1920 թ. մայիսի 25-ին Հանրապետության վարչապետին ուղղած նամակում իր համաձայնությունն էր հայտնում Պողոս Նուբարի ստորագրելու առթիվ՝ միայն այն պայմանով, որ վերջինս լինի պատգամավոր և ոչ թե նախագահ<sup>31</sup>։ Պողոս Նուբարը սկզբում համաձայն էր, որ Ավ. Ահարոնյանը դիմի կառավարությանը՝ իր համար ստորագրելու արտոնություն ստանալու համար, բայց հետո Գ. Նորատունկյանի միջոցով հայտնեց, թե քանի որ Նրևանում կոալիցիոն կառավարություն չկա, ապա ինքը ոչ մի արտոնություն չի խնդրի։ Գ. Նորատունկյանն էլ այդ առնչությամբ գտնում էր, որ Ավ. Ահարոնյանն այլևս պատասխանատու չէ, եթե «փաշան հնարավորություն չունենա ստորագրել»<sup>32</sup>։ Իր դիրքի համար անպատվաբեր համարելով հայրենի կառավարությունից արտոնագիր խնդրել՝ Պողոս Նուբարն այդպիսի արտոնություն ձգտում էր ստանալ բրիտանական արտաքին գործերի նախարարությունից<sup>33</sup>։

Հայաստանի երկրորդ ներկայացուցիչ պետք է լիներ Ա. Փափազյանը, բայց նա Փարիզ հասավ միայն սեպտեմբերի 25-ին<sup>34</sup>։

Կարծում ենք նպատակահարմար կլիներ, եթե Ավ. Ահարոնյանի հետ ստորագրեր նաև Պողոս Նուբարը,— գրել է

29 «Մշակ», Թիֆլիս, 1920, օգոստոսի 29, թ. 83։

30 «Արևելիկան Մամուլ», Իդմիր, 1920, օգոստոսի 18, թ. 2324։

31 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 146։

32 Ահարոնեան Ավ., նշվ. աշխ., էջ 87—88։

33 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 169։

34 Փափազեան Ա., Իմ Ցուշերք. Գ, Պէյրուս, 1957, էջ 88։

Ս. Վրացյանը<sup>35</sup>, սակայն նրա անձնական մրցակցության ոգին մերժեց այդ հնարավորությունը:

Հնդհանրացնելով՝ այս հարցի առթիվ կարելի է անել մեկ եզրակացություն. 1920 թ. գոյություն ունեւր անկախ պետություն և միայն նրա պաշտոնական ներկայացուցիչն էր ի պաշտոնե իրավասու կառավարության անունից նման բարձր մակարդակի և պատասխանատու դաշնագիր ստորագրելու:

Հայաստանի կառավարությունը իր հնարավորությունների կարողության սահմաններում ձգտում էր կյանքում իրագործել դաշնագիրը: Որոշակիորեն նախապատրաստվում էին արևմտահայ նահանգներն ազատագրելու համար, բայց ժամանակի լարված միջազգային հարաբերությունների պայմաններում ստիպված սպասում էին Փարիզի խորհրդածողովի որոշմանը<sup>36</sup>: ՀՀԴ բյուրոյի երկրորդ սեկցիան նույնիսկ կոնկրետ առաջարկներ արեց տվյալ նահանգների վարչական և միլիցիայի համակարգի ձևավորման համար<sup>37</sup>: 1919—1920 թթ. բոլոր բարձր տրամադրություն ունեին և մեծ հույսեր: Ժողովուրդը և կառավարությունը հավատով էին լցված և ձգտում էին այդ հույսերը իրականացնել<sup>38</sup>:

Եվ եթե չլինեին եվրոպական տերությունների Սևրիս դավաճանելու քաղաքականությունը և քեմալական արշավանքը՝ Սևրի դաշնագիրը բնավ չէր կորցնի իր գործնական ուժը:

Չնայած Սևրում առկա էին եվրոպական դիվանագիտության և հայկական պահանջների որոշակի հարաբերություններ, այնուամենայնիվ եվրոպան ինչպես միշտ հետևողական շեղավ և դաշնագիրը նրա համար սոսկ ժամանակի քաղաքական անհրաժեշտության արդյունք էր:

35 Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 1966, էջ 148:

36 Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 169:

37 ՀՀ ԶԲԿ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 157, թ. 2:

38 Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 171:

Սևրին հաջորդեց տերութիւննների միջև հակամարտութեան սրումը և դաշնագիրը փոփոխելու քաղաքականութիւնն ավելի մեծ թափ առավ: Դեռևս Սևրի թանաքը չէր շորացել՝ Եվրոպան ձեռնարկեց այն հարմարեցնելու ստեղծված նոր իրադրութեանը և իր շահերին:

Այդ ուղղութեամբ առաջին հարվածը 1920 թ. նոյեմբեր 26-դեկտեմբեր 4-ի Լոնդոնի կոնֆերանսն արեց՝ մերժելով Հայաստանի անդամակցութիւնն Ազգերի Լիգային<sup>39</sup>: Հետագայում, 1921 թ. փետրվարի 26-ի Լոնդոնի<sup>40</sup> և 1922 թ. մարտի 23—25 Փարիզի<sup>41</sup> կոնֆերանսներում Եվրոպան արդեն մոռացել էր իր խոստումների մասին և Սևրի դաշնագիրը «մեր մեծ դաշնակիցների» կողմից դարձավ մի ազգային օջախ: Պատմական և իրավական անարդարութեան այս անբարո շղթայի գագաթնակետը Լոզանի<sup>42</sup> կոնֆերանսն էր, ուր վայ դաշնակիցները քեմալականների հետ գործակցած ձեռնարկեցին հայկական հարցի «վերջնական լուծումը»:

Այստեղ հարկ է նշել, որ Ա.վ. Ահարոնյանի ճշմարտացի համոզմամբ «բոլոր դաշնագրերն ավելի կամ պակաս վերաքննութեան պիտի ենթարկվեն և չի ապրելու նաև Լոզանի մասնից արտառոց դաշնագիրը»<sup>43</sup>:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով հարկադրաբար Սևրի դաշնագիրը ճանաչել էր անվավեր (հողված 9)<sup>44</sup>: Սակայն այդ նույն կառավարութիւնը 1920 թ. նոյեմբերի 2-ին, Կարսի անկումից հետո, Ա.վ. Ահարոնյանին հայտնելով, որ կարող է ստիպված

39 Հայաստանը... փաստաթղթերում, էջ 687—690:

40 Նույն տեղում, էջ 697—704, Ահարոնեան Ավ., նշվ. աշխ., էջ 83, Փափագեան Վ., նշվ. աշխ., էջ 373:

41 Նույն տեղում, էջ 711—733:

42 Նույն տեղում, էջ 735—764:

43 Ահարոնեան Ավ., Մեր օրերը, «Հայրենիք», Բոստոն, 1927, նոյեմբեր, էջ 88:

44 Հայաստանը... փաստաթղթերում, էջ 685:

ժանր հանձնառու թյուրուններ կնքել՝ նրան հրամայել էր չընդունել այդ պարտադրվելիք ժանր պայմանները<sup>45</sup>։ Այդ հանգամանքի մասին Ավ. Ահարոնյանը նշեց 1921 թ. փետրվարի 26-ի կոնդոնի կոնֆերանսում։ Ի դեպ, նա մեկ անգամ ևս իրավագիտորեն հիշեցրեց, որ «Սևրի դաշնագիրը Հայաստանը տվել էր հայերին որպես փոխհատուցում այն տառապանքների, որ նրանք կրել էին հինգդարյա հալածանքների, երեսուն տարվա պայքարի և վեց տարվա պատերազմների ու կոտորածների ընթացքում»<sup>46</sup>։

Զնայած Լոզանի դաշնագրի կնքմանը՝ այնուամենայնիվ, ըստ որոշ հեղինակների, միջազգային իրավունքի նորմերի համաձայն Սևրի դաշնագիրը միանգամայն պահպանում է իր իրավաբանական ուժը և հիմք հանդիսանում հայկական պահանջների համար<sup>47</sup>։

Վերջ ի վերջո Լոզանով սկիզբ չառավ հայկական հարցը, որպեսզի նրանով էլ ավարտվեր։

Իր ժամանակի հայ քաղաքական միտքն ընդհանուր առմամբ դրական է զնահատել Սևրի դաշնագրի դերն ու նշանակությունը։ ՀՀԴ բյուրոյի խոսնակը օգոստոսի 10-ը համարելով «պատմական թվական և հայության ամենամեծ յիշխական օր», այսուհանդերձ նշում էր, որ կարևոր ու անհրաժեշտ է դաշնագրի գործադրությունը<sup>48</sup>։

Հնչակյանները նույնպես բարձր կարծիքի էին։ Ա. Կենճյանն այն համարում էր «ազգային ազատության փառավոր և անզուգական պատվո թիվ»<sup>49</sup>։ Նմանապես Սևրի իրագործումը կախված էր առաջին հերթին հայերից<sup>50</sup>։

45 Ահարոնյան Ավ., նշվ. աշխ., էջ 111։

46 Հայաստանը... փաստաթղթերում, էջ 701։

47 Թորիկեան Ե., Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրուսի, 1976, էջ 84—91, 107—108, 131—137։

48 «Հառաջ», Երևան, 1920, օգոստոսի 19—22, թթ. 177—179, հոկտեմբերի 13, թ. 229։

49 «Տալրոս», Ադանա, 1920, սեպտեմբերի 13, թ. 169։ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 48։

50 «Երիտասարդ Հայաստան», Զիկադո, 1920, օգոստոսի 21, թ. 30։

Ռամկավար-ժողովրդական խումբն էլ Սևրը համարելով «հայ ազգի պատմության մեջ դարագլուխ բացող»<sup>51</sup>, միաժամանակ այն ամենահարմար և ամենալավ պահն էր համարում ներքին պայքարին վերջ տալու համար<sup>52</sup>։ Նրանք ևս կարծում էին, որ Սևրի իրագործողն առաջին հերթին հայերն են լինելու<sup>53</sup>։

Սակայն հետագա տարիների միջկուսակցական պայքարը և մրցակցությունը երկփեղկեցին այս մոտեցումները։ Փաստորեն միայն ՀՀԴ-ն է, որ հավատարիմ է մնացել նախորդ շրջանի ռազմավարությանը՝ իր քաղաքական նպատակը համարելով Սևրի դաշնագրի իրագործումը<sup>54</sup>։

Սևրի դաշնագիրն ունի երկակի բնույթ։ Առաջին, եթե Օսմանյան կայսրությունը զգալիորեն մասնատվելով փաստորեն վերածվում էր եվրոպական տերությունների կիսադադուլի, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ այդ նույն կայսրությունն իր հսկայածավալ տարածքով թուրքերի կողմից բնիկ ժողովուրդների նվաճման և բնաջնջման հետևանք էր։ Երկրորդ, Սևրի դաշնագիրը պատմական և մարդկային առումներով արդարացի էր հատկապես ազգային փոքրամասնությունների հետագա ճակատագրի համար։

Սևրի դաշնագիրը եղավ հայ ժողովրդի իղձերի, ցանկությունների արտացոլումը միջազգային դիվանագիտության մեջ, սակայն այն չիրականացվեց գործնական քաղաքականությամբ։ Ի չիք դարձան հայ քաղաքական մտքի հույսերը։ Արևմտասփրսությունը կրկին հավաստեց իր սխալականությունը։ Եվրոպան և ԱՄՆ-ը այս անգամ էլ խաբեցին հայ ժողովրդին։

51 «Կոչնակ Հայաստանի», Պոսթոն, 1920, օգոստոսի 28, թ. 35, էջ 1105։

52 «Ժողովուրդ», Երևան, 1920, օգոստոսի 27, թ. 144։

53 «Մշակ», Թիֆլիս, 1920, օգոստոսի 18, թ. 78։

54 ՀՀԴ, ծրագիր, հաստատուած ԻԲ Ընդհանուր ժողովում, 1982, էջ 25—26։

## ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

### ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈՒԼԻ ԳԱՎԱՌԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՅ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

1920 թ. թուրք-հայկական պատերազմը հայոց նորագույն պատմության ողբերգական էջերից է: Հայաստանի Հանրապետության ներքին կյանքի անկայունությունը, որն առավել ցայտուն էր դրսևորվում գավառներում, և արտաքին քաղաքական կյանքի ձախողումները պատճառ հանդիսացան 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտությանը: Պարտվելով այս պատերազմում, հայերը կորցրեցին ոչ միայն հայկական հողերը մեկ միասնական պետության մեջ միավորելու բացառիկ հնարավորությունը, այլև նորանոր տարածքներ զիջեցին թուրքերին, կրեցին հսկայական նյութական վնասներ, տվեցին մեծաթիվ մարդկային զոհեր և վերջապես զրկվեցին անկախ պետականությունից:

Բացառիկ ծանր հետևանքներ ունեցավ այս պարտությունը Ալեքսանդրապոլի գավառի բնակչության համար: Բայց բանակի բարոյալքման, բնակչության խուճապի, իշխանությունների անգործության հետևանքով թուրքերը հեշտությամբ զրավեցին Ալեքսանդրապոլն ու գավառը, որը վեց ամիս պահեցին օկուպացիայի դաժան ռեժիմի պայմաններում: Այսպես, դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի և 1921 թ. Մոսկվայի պայմանագրերի համաձայն Ալեքսանդրապոլի գավառը մնում էր Հայաստանի կազմում: Թուրքերն այստեղից հեռացան միայն 1921 թ. ապրիլի 22-ին:

Կարաի անկումից հետո հայոց զորքն անընդունակ գտնվելով դիմադրություն ցույց տալ թուրքերի ճնշմանը, քայլ առ քայլ նահանջելով՝ կանգ է առնում Ալեքսանդրապոլից 18 կմ հեռու գտնվող Ղզըլ-Չախախ գյուղում, Շիրակի նահանգապետ Կարո Սասունու վկայութեամբ՝ «չնայած հայկական զորքի թիվն այստեղ հասնում էր տասը հազարի, քայց այն ավելի շուտ ամբոխի էր նմանվում, քան բանակի՝ պարտվածի հոգեբանութեամբ և մինչև սրտի խորքը հուսահատված»<sup>1</sup>։

Ոչ կառավարութեան կոչերը՝ ուղղված ժողովրդին, և ոչ էլ Շիրակի նահանգապետութեանը ենթակա Արտակարգ մարմնի կոչերը՝ ուղղված հրամանատարներին՝ տեր կանգնելու իրենց զորքին, արձագանք չեն գտնում։

Գեպքերի ականատես և մասնակից անհայտ գրողի օրագրում կարդում ենք. «Դասալքությունը սոսկալի շափերի է հասնում։ Գիշերները զինվորները հարյուրներով են փախչում։ Զորքի բարոյական կորույր բավականին ընկած է, զորավարից սկսած մինչև հասարակ զինվորը ոչ միայն դիմադրելու, առաջ խաղալու հույս չունեն, այլև հավատացած են, որ ամեն բան վերջացել է։ Բաբելոնյան խառնակություն է տիրում։ Մեր բանակը չի կռվում և օր քառք շտապում է տուն հասնել, որպեսզի թշնամուն չհանդիպի»<sup>2</sup>։

Թուրքերը տեսնելով հայկական բանակի վիճակը, զընդացրային կրակով մշտական վախի մեջ են պահում նրան։ Վերջինս, լիովին կորցնելով հավատն իր ուժերի նկատմամբ, միակ ելքը տեսնում էր զինադադարի մեջ։ Ընդ որում դրան սպասում էին հասարակ զինվորից մինչև հրամանատարը։ Այս վիճակն անկարող էին փոխել կառավարութեան և պառլամենտի անդամների, մտավորականների և կուսակցութեան-

<sup>1</sup> Սասունի կ., Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք», թիվ 7, Բոստոն, 1926։

<sup>2</sup> «Ազատ, անկախ և միացյալ Հայաստանի վերջին օրեր», Երևան, 1993, էջ 109։

ների կոչերը, որոնցով ժողովուրդին զենքի էին կոչում, ձրգ-  
 տում վերականգնել բանակի ոգին ու կորովը՝ հույս ունենա-  
 լով եթե ոչ գրավել, ապա գոնե թուրքերի առաջխաղացումը  
 կանգնեցնել և ոչ նվաստացուցիչ պայմանագիր կնքել: Վի-  
 ճակը շի փոխում նաև կառավարութայան անդամների գա-  
 յուստը Ալեքսանդրապոլ: Դեռևս հոկտեմբերի 14-ի ձախող-  
 ված հարձակումից հետո Ալեքսանդրապոլ էին եկել հաղոր-  
 դակցութայան նախարար Ջամալյանն ու լուսավորութայան նա-  
 խարար Ղազարյանը, որոնք պետք է աջակցեին հրամանա-  
 տարութայանը և տեղական իշխանությունների հետ լուծեին  
 բոլոր խնդիրները: Նոյեմբերի 1-ից նրանց են միանում  
 քսանից ավելի գործիչներ՝ զինվորական նախարարը, սպա-  
 րապետ Նազարբեկյանը և պառլամենտի անդամներ: Նույն  
 օրը նրանք մեկնում են Ղզըլ-Չախչախ՝ տեսնելու զորքի վի-  
 ճակը: Նոյեմբերի 2-ին վերադառնալով այնտեղից՝ վերջին-  
 ներս հայտարարում են, որ եղած զորքով որևէ լուրջ գոր-  
 ծողություն կատարելն անհնարին է, և որ միակ ելքը զինա-  
 դադարն է: Նոյեմբերի 2-ին թուրքերը որոշում են դիմել զի-  
 նադադարի, որով հայերին առաջարկում են սկսել հաշտու-  
 թյան բանակցություններ<sup>3</sup>: Նոյեմբերի 3-ին Հայաստանի կա-  
 ռավարությունը ևս որոշում է կայացնում պատերազմական  
 գործողությունները դադարեցնելու և հաշտութայան դիմելու  
 մասին<sup>4</sup>:

Նոյեմբերի 4-ին արդեն առանց դիմադրութայան թողնը-  
 վում է Ղզըլ-Չախչախը, որն է՛լ ավելի է մեծացնում խու-  
 ճապը: Խուճապը ցրելու և նահանջը կարգավորելու ջանքերը  
 արդյունք չեն տալիս: Ավելին, խուճապը տարածվում է զին-  
 վորական և քաղաքացիական բարձր իշխանությունների շրջ-  
 շանում: Չնայած կառավարութայան որոշմանը, այն է՝ թուր-  
 քերի կողմից Ալեքսանդրապոլը գրավելու դեպքում քաղա-  
 քում պետք է մնան քաղաքացիական վարչութայան անդամ-

3 22 ՉԳՎ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 272, թթ. 32—33:

4 22 ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 74:

ները, շրջանային ինքնավարութեան նախագահը, վարչութեան անդամները և ընդհանրապէս բոլոր պաշտոնյաները, նոյեմբերի 5-ի լուսաբացին թողնում են քաղաքը՝ մատնելով այն անիշխանութեան, թաւանի, ամերման ու հրդեհման:

Այս ամենից հետո միայն գորավար Սիլիկյանի թույլտվութեամբ ընտրվում է տասնհինգ հոգուց բաղկացած կոալիցիոն մարմին՝ կեռն Սարգսյանի գլխավորութեամբ, որը պետք է ձեռնամուխ լիներ քաղաքի գործերի կարգավորմանը: Կեռն Սարգսյանը նշանակվում է նաև Ալեքսանդրապոլում Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ՝ խորհրդականներ ունենալով Ենովք Միրաբջանին և Պ. Շերմազանյանին<sup>5</sup>:

Քաղաքի զինվորական և քաղաքացիական իշխանութիւնների փախուստը է՛լ ավելի է մեծացնում անիշխանութիւնն ու խուճապը: Ստեղծված իրավիճակում նոյեմբերի 5-ի լուսաբացին բոլշևիկները, դուրս գալով բանտից, փորձում են իրենց ձեռքը վերցնել իշխանութիւնը՝ կարծելով, թե դրանով կկասեցնեն թուրքերի առաջխաղացումը, քանի որ, ըստ իրենց, թուրքերի նպատակը միայն դաշնակցական կառավարութեան տապալումն էր<sup>6</sup>: Սակայն Սեպուհը բոլշևիկներին սպառնում է ձերբակալութեամբ, և վերջիններս հարկադրված անցնում են ընդհատակ: Նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլում հաստատվում է զինադադար, որի համաձայն հայկական զորքերը Ալեքսանդրապոլը մաքրելով՝ Արփաշայից առնվազն 15 կմ արևելք պետք է քաշվեին, բայց քաղաքը չպետք է զրավվեր թուրքերի կողմից, այլ միայն բերդն ու կայարանը<sup>7</sup>: Զինադադարը կնքվում է տասնօրվա պայմանաժամով, որին պետք է հետևեին հաշտութեան բանակցութիւնները: Ակնհայտ էր, որ բանակցու-

<sup>5</sup> Նույն տեղում, գ. 448, թ. 1:

<sup>6</sup> ՀՀ ԶԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189, թ. 3:

<sup>7</sup> Լազյան Հ., Հայաստանը և հայ դատը ըստ դաշնագրերու, Գահիրե, 1942, թթ. 193—194:

Քյունները արդյունքները հայերի համար, ինչպես նշված էր նոյեմբերի 7-ի կառավարական հաղորդագրության մեջ, այնքան բարեհաջող կլինեին, որքան մեծ կլինեի նրանց դիմադրական ուժը<sup>8</sup>։

Մասնավորապես Ալեքսանդրապոլի ապագան շատ բանով կախված էր նաև քաղաքի իշխանություններից և ժողովրդից։ Ինչ վերաբերում է ժողովրդին, քաղաքում մնացած բնակչությանը, ապա նրանք պատրաստ էին համախմբվել իշխանության շուրջ և աշակցել բանակին։ Կան բազմաթիվ վկայություններ այդ մասին։ Բերենք նրանցից մեկը. Ալեքսանդրապոլում կենտրոնական իշխանության ներկայացուցչի խորհրդական Շերմազանյանի՝ 1920 թ. նոյեմբերի 7-ի առավոտյան հեռագիրը՝ ուղղված Արշակ Ջամալյանին։ «Շտաբը իր տեղում է գտնվում։ Արսենը դբաղված է իր ընթացիկ խնդիրներով, սակայն նա մնացել է համարյա մենակ՝ անզոր բավարարելու քաղաքացիների հարցուփորձերին։ Քաղաքացիները բանակի համար ինքնակամ կերպով հավաքում են հաց, մսացու, ծխախոտ։ Մի փոքր առաջ մի խումբ կանայք եկան շտաբ, ցանկություն հայտնեցին անձամբ տանել դիրքերում բաժանել հացը և ծխախոտը։ Առայժմ այդպիսի աշխուժություն է տիրում Սեպուհի բանակի շուրջը։ Քաղաքում չեն երևում գործադիր իշխանությունները, բացակայում են հատկապես միլիցիոներները։ Չափազանց անհրաժեշտ է մոբիլիզացնել Երևանի մեր կուսակցական ընկերներին և բերել Ալեքապոլ։ Մայրահեղորեն անհրաժեշտ է այստեղ բերել բեռնակիրներ՝ պահեստների ռազմամթերքը կայարան տեղափոխելու և Երևան ուղարկելու համար։ Մանրամասնություններ չեմ հայտնում և չեմ ուզում գուշակել քաղաքի ապագան, սակայն անհրաժեշտ է իմ հաղորդած պահանջները բավարարել ամենաարագ կերպով։ Ժամանակը թանկ է։ Հակառակ դեպքում Ձեզ վրա կվերցնեք բարոյական պատասխանատվությունը»<sup>9</sup>։

8 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 448, թ. 1։

9 ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 2։

Սակայն դժբախտաբար «հայրենիքը պաշտպանող բանակը» որպես այդպիսին արդեն գոյություն չունի, իսկ գործադիր իշխանությունների բացակայությունը քաղաքը վերջնականապես մատնել էր անիշխանության:

Նոյեմբերի 7-ի երեկոյան թուրքերը, իրականացնելով զինադադարի պայմանները, գրավում են քաղաքի բերդն ու կայարանը: Եվ նույն գիշերն իսկ խախտելով զինադադարի պայմանները՝ սկսում են բնակչության թալանն ու կոտորածը: Պարզ է դառնում, որ բնակչությունը մնացել էր բախտի քահանայքին: Ինչ վերաբերում է Լևոն Սարգսյանի գլխավորած կոալիցիոն իշխանությանը, ապա այն շատ կարճ ժամկետում հեղինակագրվում է թուրքերի աջակցությունից օգտվող բոլշևիկների կողմից: Վերջիններս ձգտում էին գրավել իշխանությունը՝ կարծելով, թե դրանով միայն կարելի է փրկել բնակչությանը թուրքական սարսափներից և նրանք կոչ էին անում համախմբվել բոլշևիկների շուրջը և պահանջել խորհրդային իշխանության հռչակումը Ալեքսանդրապոլում:

Թուրքերը մի կողմից բոլշևիկյան քարոզչության շնորհիվ թուլացնում էին ժողովրդի կամքը, մյուս կողմից՝ փորձում զարգացնել ռազմական հաջողությունները: Այս նպատակով նրանք նոյեմբերի 8-ին նոր, ծանր պայմաններ են առաջադրում Հայաստանի կառավարությանը<sup>10</sup>:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, չկարողանալով ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը, չի ընդունում այս պահանջները: «Ես լավ կհիշեմ այն խորհրդակցությունը, — գրում է Ալեքսանդր Խատիսյանը, — որ կայացավ նոյեմբերի 10-ի գիշերը, ժամը 3-ին, գլխավոր հրամանատարի սպայակուլտի դահլիճում: Ժողովի բոլոր անդամները, բացի ինձմե, արտահայտվեցան այն մտքով, որ

<sup>10</sup> Լազյան Է., Նշվ. աշխ., էջ 196—197:

պետք է մերժել պայմանները և ուրեմն շարունակել պատերազմը»<sup>11</sup>։

Խորհրդարանի այս նիստում Խատիսյանը, առաջարկելով հաշտութուն կնքել, շատ ճիշտ է գնահատում ստեղծված իրավիճակը։ «Զորքի և ժողովրդի դրությունը,—ասում է նա,—այնպես է, որ պատերազմի շարունակությունը ավելի ևս կծանրացնի մեր երկրի վիճակը։ Զորքը չի կռվում։ Ազգաբնակչությունը փախչում է և կորչում նեղություններից, ցրտից և սովից։ Թշնամին մոտենում է Ալեքսանդրապոլին, որն այս օրերս կրնկնի նրա ձեռքը։ Մյուս կողմից սպառնում են բուլղեիկները։ Անկարելի է կռվել երկու ճակատներով։ Ես կարծում եմ, որ թշնամին կմոտենա Երևանին։ Կառավարությունը և պառլամենտի անդամները կթողնեն քաղաքը, իսկ ժողովուրդը կմնա անպաշտպան։ Ավելի լավ է անել անխուսափելի զոհաբերություններ, քանի դեռ ուշ չէ, քան թե կորցնել ամեն ինչ։

Ճիշտ է, թուրքերի պայմանները ծանր են, բայց չկան բացարձակապես տվյալներ, որ մենք պետք է կարողանանք նրանցից ազատվել»<sup>12</sup>։ Հարկ է լինում ուղղմական գործողությունների մի քանի օր, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությանը պարզ դառնար, որ հաշտության կնքումն ամեն գնով անհրաժեշտ էր։ Նոյեմբերի 11—14-ը տևած ուղղմական գործողությունների հետևանքով թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլի գավառը, որի անպաշտպան մնացած բնակչությունը ստիպված հանձնվեց թշնամու ողորմածությանը։ Նոյեմբերի 18-ին կնքված զինադադարի համաձայն զինված ուժերը հետ են քաշվում և զբաղեցնում Որդնապլ—Բաշ-Ապարան—Գանազիրմազ—Սոնգյուռլու—Ղըրմըզլու—Ալագյազ գիծը։ Տաճիկները բանակցությունների նախօրյակին գտնվում էին Նալբանդ կայարանի, Մեծ Պար-

11 Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ժողովն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 168։

12 Նույն տեղում, էջ 250։

նի, Զրախլի, Ղուղաթ, Ղուլիշան, Արթիկ և Սոնգյուռուլու գյուղերի սահմաններում: Այստեղից մինչև Բաշ-Ապարան և Թալին ընկած տարածքը համարվում է «չեզոք գոտի»: Այդ գոտու մեջ մտնում էին 45 գյուղեր, որոնք շուտով լցվում են Տաճկաստանից, Սարիղամիշից, Կարսից, Ալեքսանդրապոլից և այլ վայրերից եկած փախստականներով<sup>13</sup>:

Ալեքսանդրապոլի գավառի գրավումը ռազմական տեսակետից որևէ անհրաժեշտություն չէր ներկայացնում, քանի ժր մինչ այդ Հայաստանի Հանրապետության պարտությունն արդեն կասկած չէր հարուցում: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության կառավարությունը մերժել էր նոյեմբերի 8-ի վերջնագիրը և շարունակել պատերազմը ոչ այնքան հույսը դնելով հայոց բարոյալքված բանակի վրա, որքան դիվանագիտական միջնորդության: Կարծելով, թե խորհրդային Ռուսաստանը և Անտանտը թույլ չեն տա թուրքերի առաջխաղացումը, Հայաստանի կառավարությունը օգնության խնդրանքով նախ դիմում է խորհրդային Ռուսաստանին, ապա և Անտանտին: Սակայն նույնքան ծանր պարտություն է կրում նաև դաշնակցական դիվանագիտությունը: Թուրքերի առաջխաղացումը որոշ իմաստով մտնում էր թե՛ խորհրդային Ռուսաստանի և թե՛ Անտանտի քաղաքական շահերի մեջ:

Դաշնակիցները հույս ունեին, որ Թուրք-հայկական պատերազմում թուրքերի առաջխաղացմանը կհաջորդի թուրքական բռնության ընդլայնումը Անդրկովկասում, ինչը կհանգեցնի պատերազմի Թուրքիայի և խորհրդային Ռուսաստանի միջև: Ինչ վերաբերում է խորհրդային Ռուսաստանին, ապա այն տալով դիվանագիտական միջնորդության համաձայնությունը, ռազմական օգնությունը պայմանավորում էր Հայաստանի խորհրդայնացմամբ: Մերժելով խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանը զորք մտցնելու առաջարկը, Հայաս-

<sup>13</sup> ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 127, թ. 167:

տանի կառավարությունը հնարավորություն է ընձեռում թուրքերին հանդես գալ որպես «հեղափոխական, ազատարար» բանակ, որի նպատակն է «փրկել հայ աշխատավորությանը դաշնակցականների լծից և Հայաստանում բանվորագյուղացիական կարգեր հաստատել»։ Դեռևս 1920 թ. նոյեմբերի 3-ին Քյազիմ Կարաբեքիրը 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդին հղած դիմումում գրում էր. «Անհրաժեշտ է Հայաստանը շուտ ազատագրել դաշնակցականների տիրապետությունից։ Մեր դաշնակից խորհրդային Ռուսաստանը պետք է ձեռնարկի վճռական միջոցներ Հայաստանը դաշնակցականների տիրապետությունից ազատագրելու և կառավարության դեկր հանձնելու այն կուսակցությանը, որս անկեղծորեն հոգացել է հայ ժողովրդի իսկական կարիքների համար։ Թուրքական հեղափոխական բանակը իր կողմից պատրաստ է ամեն տեսակի աջակցություն ցույց տալ իր դաշնակցին»<sup>14</sup>։ Փաստորեն Ալեքսանդրապոլի գավառի պրավումը թուրքերի կողմից ստիպելու էր Հայաստանի կառավարությանը իշխանությունը խաղաղ կերպով հանձնել բոլշևիկներին։ Վերջիններս շատ զգույշ էին Կարմիր բանակի զինվորներ Հայաստան մտցնելու գործում, որպեսզի Անտանտին հնարավորություն չտրվեր Կովկասում ռազմական գործողություններ սկսել։ «ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյին և ՌԽՅԽՂ-ի լիազոր Օրջոնիկիձեին ցուցում է տրվում Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու նպատակով այստեղ Կարմիր բանակի զորամասեր չմտցնել, դաշնակցականների հետ զինված ընդհարումների ոչ մի առիթ չստեղծել և առհասարակ չդիմել այնպիսի գործողությունների, որոնք Անտանտը օգտագործելը Կովկասում պատերազմական գործողություններ սկսելու համար»<sup>15</sup>։

14 Տե՛ս Ալլիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964, էջ 339։

15 Նույն տեղում, էջ 134։

Ալեքսանդրապոլի գավառի գրավումը ռազմական տեսակետից ոչ միայն անհրաժեշտ չէր, այլև էական նշանակութուն չունէր, քանի որ բոլոր դեպքերում այն մնալու էր Հայաստանի կազմում:

Լեզրանը, նոյեմբերի 19-ին Օհանջանյանի և Տեր-Մինասյանի հետ հանդիպման ժամանակ, իմանալով նոյեմբերի 8-ի զինադադարի պայմանների մասին, հայտարարում է. «Եթե Հայաստանի կառավարութունը համաձայնել է Կարսը, Թուրքերին հանձնել, ապա ռազմաճակատի հետագա զորացման կամ ռազմական օգնության համար Ռուսաստանին դիմելու ամեն մի անհրաժեշտութուն վերանում է, քանի որ Թուրքերն այս պայմաններում միշտ էլ խաղաղութուն կկնքեն Հայաստանի հետ»<sup>16</sup>:

Պատահական չէր, որ թեև Ալեքսանդրապոլի գավառը գրավվեց Թուրքերի կողմից, բայց 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով այն մնում էր Հայաստանի կազմում: Եվ չնայած որ այդ պայմանագիրը կնքվել էր արդեն իշխանութուն չունեցող դաշնակցական կառավարության կողմից, նույնությամբ կրկնվում է 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերում: Այդ մասին է վկայում նաև Ալ. Խատիսյանը, որը 1921 թ. փետրվարի 20-ին Կ. Պոլսի «Պատրիարքարանում հավաքված բարեկամներու փոքրիկ շրջանակի մը մեջ» ասել է. «...երբ Քյազիմ Քարաբեքիրի մոտ կպնդեի, թե ոուս բոլշևիկ ներկայացուցիչ Մդիվանին պետք է մասնակցի բանակցութուններուն ու Քարաբեքիր կմերժեր, ըսի, թե պոլշևիկներն իրեն շեն ներեր այս բանը: Այն ատեն Քարաբեքիր մտերմորեն պատասխանեց.— Դուք պետք է գիտնաք, պ. Խատիսյան, որ մենք նախապես համաձայնած ենք Մոսկվայի հետ՝ ստանալով Կարսի նահանգը, ավելին մեզ շեն տար, բայց եթե այժմ դուք չընդունեք մեր պայմանները,

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թթ. 129—134:

ես կքալեմ ավելի առաջ, փույթ չէ, թե վաղը ստիպված ետ դառնամ»<sup>17</sup>։

Կարծում ենք՝ վերը նշված հանգամանքներով է բացատրվում Ալեքսանդրապոլում թուրքերի քիչ ուժեր երևան բերելու հանգամանքը։ Ըստ Ալեքսանդրապոլի շրջանում գտնված տաճկական զորքերի մասին զեկուցման՝ տաճկական բանակը օկուպացիայի ենթարկված մասերում հետևյալ պատկերն ունեւր. «Ստրատեգիական վերջին կետը Ջաջուռի լեռնաշղթան էր, որի վրա հիմնված են սահմանապահ կայաններ, որոնք հաշվվում են մոտավորապես երեք հարյուր։ Այնուհետև Ղալթախի, Նալբանդ կայարանները որպես չեզոք գոտու շրջան, ունեն միայն շատ քիչ թվով պահակներ՝ մոտավորապես հինգական զինվոր։ Ջաջուռի լեռներից այն կողմը (դեպի Երևան դարձած) ռազմական վերջին կայանը հանդիսանում է Դյուզքենդ գյուղը, ուր տեղավորված է մոտ երեք հարյուր զինվոր։ Այդ ուղղութեամբ, որքան մեզ հայտնի է, վերջին ռազմական բազան Քավթաուլի գյուղն է. Ալեքսանդրապոլից 16 վերստ հեռավորութեան վրա, ուր կան մոտ հազար զինվոր, պուլեմոտային մասեր և այլն։ Այդ ընդհանուր դիժը՝ Ջաջուռից մինչև Քավթաուլի և այնուհետև մինչև Ադին կայարանը, պահպանվում է սահմանապահ կետերով, որոնք տեղավորված են զլխավորապես բարձր տեղերում։ Ավելացնենք նաև, որ Ալեքսանդրապոլից 7—8 վերստի վրա գտնված Խլի Ղարաքիլիսա գյուղում նույնպես հաստատված է կայան, ուր կան մոտ հարյուր զինվորներ, սակայն այս կայանն ավելի նյութական պարենավորման աշխատանք է կատարում, քան ռազմական։ Այս կայանը հավաքում է ամբողջ պարենը և ջրի այն կողմն է ուղարկում։ Բուն Ալեքսանդրապոլում տաճիկներն ունեն շատ քիչ զինվորներ՝ յոթ հարյուր հոգի, որոնք զլխավորապես տեղավորված են բերդում և կայարանում»<sup>18</sup>։

17 «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 24 փետրվարի, 1921։

18 Տե՛ս 22 ՆՊ ԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, թթ. 10—11։

Ալեքսանդրապոլում թուրքական փոքրաթիվ ուժերի առկայության մասին է վկայում նաև Շիրակի նահանգապետ Կարո Սասունին. «Քաղաքի մեջ առաջին օրերուն թուրքերը հազիվ 500 զինվոր երևան բերին:

Ատոր պետք է վերագրվեր այն տարածված լուրը, որով կքննադատվեր մեր զինվորական իշխանությունը, թե քաղաքը սուրված էր առանց կռվի, 500 թրքական զինվորներու ժողովուրդը կզիտեր ու կդատեր ինչ-որ կտեսներ»<sup>19</sup>:

Թուրքերն, իհարկե, պատերազմը սկսել էին մեծ ուժերով՝ շնայած հայ բնակչության և հատկապես բարձր զինվորականության մեջ տարածված թյուր կարծիքին: Թե՛ թուրք և թե՛ հայ պատմաբանները, հենվելով արխիվային փաստաթղթերի վրա, գտնում են, որ թուրքերի ուժերը գերազանցում էին հայերին: Ինքը՝ Կարաբեքիր փաշան Հայաստանի դեմ հարձակման նախօրեին Անկարայում զինվորական բարձրաստիճան սպաների այն հարցին, թե «Կարաբեքիրը ունի՞ արդյոք բավականաչափ զորք և հավատացած է քեմալական զորքերի լիակատար հաղթանակին», պատասխանում է, որ ունի շորս դիվիզիա, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 8—9 հազար զինվորներից և աշակցություն կատանա թուրքական և քրդական ուժերից»<sup>20</sup>:

Կարծում ենք, թուրքական ուժերի վերաբերյալ ունեցած թյուր պատկերացումը էական դեր է խաղացել հայոց բանակի բարոյալքման գործում: Արդեն հոկտեմբերի 14-ի անհաջող հարձակումից հետո ուժեղանում է խուճապը և դասալքությունը բանակի շարքերում: Իսկ Կարսի անկումից հետո այդ բանակն այլևս մարտունակ չէր: Եվ բնական է, որ Ալեքսանդրապոլում թուրքերը մեծ ուժերի կարիք չունեին: Մանավանդ որ ոչ միայն Խորհրդային Ռուսաստանն ու Անտանտը չէին խանգարում նրանց առաջխաղացմանը,

<sup>19</sup> Տե՛ս Սասունի Կ., Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք», թիվ 9, Բոստոն, 1926:

<sup>20</sup> «Մշակ», 5 նոյեմբերի, 1920 թ.:

այլև Ալեքսանդրապոլի բոլշևիկներն էլ էին օգնում: Թուրքերը հանդես գալով Հայաստանում բանվորագյուղացիական իշխանության հռչակման կոչով, ստանում են նաև Ալեքսանդրապոլի բոլշևիկների աջակցությունը: Վերջիններս, նոյեմբերի 5-ին դուրս գալով բանտից, սկսում են աջակցել թուրքերին Ալեքսանդրապոլն ու գավառը շրջափակելու գործում: Իսկ նոյեմբերի 17-ին թուրքերի հետ փոխադարձ համաձայնությամբ Ալեքսանդրապոլում հռչակում են խորհրդային իշխանություն:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստ չլինելով թուրք-հայկական պատերազմին, և չկարողանալով ճիշտ կողմնորոշվել ստեղծված միջազգային իրադրության պայմաններում, ոչ միայն նոր տարածքներ է կորցնում, այլև հնարավորություն է ընձեռում թուրքերին ցեղասպանության ենթարկել արևելահայ մի խոշոր զանգվածի, մասնավորապես Ալեքսանդրապոլի գավառի բնակչությանը:

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌՍՖՆՉ ԵՎ ՀՍԽՉ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1921 թ. ՓԵՏՐՎԱՐԻՆ ԼՈՌՈՒ  
ՉԵԶՈՔ ԳՈՏԻՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Լոռու շեղոք գոտին առաջացել էր 1918 թ. հայ-վրացական պատերազմի հետևանքով: 1919 թ. հունվարի 9—17-ը թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունենում Հայաստանի և Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որտեղ որոշվում է շեղոք գոտում մտցնել հատուկ կառավարում, երկու պետությունների լիազոր ներկայացուցիչների համատեղ ղեկավարությամբ և անգլիական գեներալ նահանգապետի վերահսկողությամբ: Չեղոք գոտու մեջ մտնում էին նախկին Բորչալուի գավառի Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջանները, իրենց 41 գյուղերով: Դժվարին կացություն է ստեղծվում տեղի հայ և ռուս բնակչության համար: Գոտում սահմանվում են բազմատեսակ տուրքեր, որոնց հավաքումը վեր է ածվում գյուղացիության իսկական թալանի<sup>1</sup>:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր թուրքական բանակի Լոռի ներխուժելու վտանգը, Հայաստանի և Վրաստանի միջև նոյեմբերի 13-ին կնքվում է համաձայնագիր, ըստ որի վրացական զորքերը պետք է ժամանակավորապես, 3 ամսով զբաղեցնեին շեղոք գոտին:

<sup>1</sup> «Լոռվա գյուղացիության ձայն», № 2, 1 փետրվարի, 1920 թ.:

Պատերազմում Հայաստանի պարտութիւնից և նրա խորհրդայնացումից հետո վրացական իշխանութիւնները խախտում են համաձայնագիրը և զորքեր մտցնում նաև շեզոք գոտու սահմաններից դուրս հայկական ութ այլ բնակավայրեր՝ Զալալօղլի (Ստեփանավան), Շահալի կայարան, Փամբակ, Քոլագերան և այլն: Լոռում հաստատվում է վրացական գնեերալ-նահանգապետութիւն, կառավարումից հեռացվում է Հայաստանի լիազոր ներկայացուցիչը, ինչը հնարավորութիւն է տալիս վրացական իշխանութիւններին ձեռնարկել զանազան բռնութիւններ տեղի հայ և ռուս բնակչութեան նկատմամբ: Ինչպես նշվում է Լոռու ռազմահեղափոխական կոմիտեի հաղորդագրութեան մեջ, «այդ գրաված շրջաններում թագավորում է սանձարձակ, քմահաճ վերաբերմունք և ամենախայտառակ կողոպուտ»<sup>2</sup>:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ թուրքական զորքերի Լոռի ներխուժման վտանգը վերացել էր, Վրաստանի կառավարութիւնը ոչ միայն պատրաստակամութիւն չհայտնեց հեռացնել իր զորքերը, այլև ձգտում էր Լոռին միացնել Վրաստանին, նախապես լայն քարոզչութիւն անցկացնելով տեղի բնակչութեան մեջ: Հայաստանի «Հեղկոմի տեղեկութիւններով,—նշում էր Բաքվի «Կոմունիստ» թերթը,—Վրաստանի կառավարութեան անդամ Չխեիձեն Վրաստանի սահմանադիր ժողովի հինգ անդամների հետ շեզոք գոտում ցույցերում ֆիզիկական ուժի ճնշման ներքո բնակչութեանը պարտադրում են ընդունել բանաձևեր ամբողջութեամբ Վրաստանին միանալու համար: Գոտու խորհրդային վարչութիւնն ապօրինաբար ձերբակալվում և ուղարկվում է Քութայիսի բանտ»<sup>3</sup>:

Վրացական իշխանութիւնների նման գործելակերպը որևէ արդիւնք չի տալիս, ընդհակառակը, ստիպում է Լոռու բնակչութեանը էլ ավելի համախմբվել և ուղիներ որոնել վրացական լծից ազատագրվելու համար:

<sup>2</sup> «Կոմունիստ», Երևան, № 53, 11 փետրվարի, 1921 թ.:

<sup>3</sup> «Коммунист», Б., № 8, 11 января, 1921 г.

Արդեն 1920 թ. դեկտեմբերից ինչպես Լոռու, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների մի շարք գյուղերում (Պրիվոլնոյե, Փյառեյառ, Վորոնցովկա, Արմանիս, Նովո-Պոկրովկա, Նովո-Միխայլովկա և այլն) հրավիրվում են հասարակական ժողովներ, որտեղ բնակչությունը, արտահայտելով իր զայրույթն ու վրդովմունքը վրացական բռնակցման դեմ, դիմումներ է հղում Խորհրդային Հայաստանի և Ռուսաստանի իշխանություններին, պահանջելով Կարմիր բանակի օգնությամբ դուրս քշել մենշևիկյան զորքերը Լոռուց և այն միացնել Խորհրդային Հայաստանին<sup>4</sup>:

Խորհրդային Հայաստանի հեղկոմը Երևան հասնելուն պես, դեկտեմբերի 7-ին և 10-ին հուշագրեր է հղում Վրաստանի կառավարությանը՝ Լոռուց վրացական զորքերի դուրսբերման և Հայաստանի շրջափակումը վերացնելու պահանջով: Հրաժարվելով բավարարել Հայհեղկոմի պահանջը, վրացական իշխանությունները մատնանշում են նոյեմբերի 13-ի համաձայնագրի դրույթների ճշգրիտ կատարումը իրենց կողմից<sup>5</sup>:

1920 թ. դեկտեմբերի 24-ին Հայհեղկոմը որոշում է կրկնել պահանջները և վրացական զորքերի դուրսբերումը համարել «որպես պայման, Հայաստանի և Վրաստանի միջև բանակցություններ սկսելու համար»<sup>6</sup>:

1920 թ. դեկտեմբերի 29-ին ՀՍԽՀ արտգործոժողկոմ Ա. Բեկզադյանը, համաձայն Հեղկոմի որոշման, հուշագիր է հղում Վրաստանի արտգործնախարարին, պատճենը՝ Վրաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Շեյնմանին, Մոսկվա՝ արտգործոժողկոմ Չիչերինին, Բաքու՝ արտգործոժողկոմ Հուսեյնովին, որտեղ նշում է, որ նո-

4 Տե՛ս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1960 թ., էջ 428:

5 Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 290, թ. 2—4:

6 ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 17, թ. 18:

յեմբերի 13-ի համաձայնագրի վրա վրացական կողմի պընդումները «ձևական են», որովհետև այն վերացված է հենց վրացական կառավարության գործողություններով: Նշելով, որ Հայաստանի խորհրդայնացումով հայ-վրացական համաձայնագիրը կորցրել է իր նշանակությունը, Բեկզադյանը հայտնում է, որ Հայաստանի իշխանությունները պատրաստ են «օգտագործել վիճելի հարցերի խաղաղ լուծումը» և դրանք արագացնելու համար նպատակահարմար են գտնում խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը<sup>7</sup>:

Այսպիսով, Հայաստանի իշխանությունները հնարավորություն էին տալիս Ռուսաստանին միջամտել հայ-վրացական հարաբերություններին և վիճելի հարցերի լուծմանը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանի իշխանությունները Վրաստանից պահանջում էին ապահովել դեպի Հայաստան բեռների անարգել փոխադրումը: Ձրգտելով հասնել վրացական իշխանությունների կողմից Հայաստանի շրջափակման վերացմանը, խորհրդային Ռուսաստանի կառավարությունը մատնանշում է Վրաստանի կողմից 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրի դրույթները կատարելու անհրաժեշտությունը: Խորհրդային կառավարության ցուցումով «դադարեցվում է նավթի առաքումը Վրաստան»: Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Շեյնմանը խորհրդային կառավարության անունից 1920 թ. դեկտեմբերին պարբերաբար հուշագրեր է հղում Վրաստանի կառավարությանը՝ պահանջելով դեպի Հայաստան «ազատ տրանզիտի իրավունք»<sup>8</sup>:

1920 թ. դեկտեմբերի 15-ին Շեյնմանը հեռագրում է Մոսկվա՝ Չիչերինին, Բաբու և Երևան, «Միայն նավթի փոխադրումը դադարեցնելուց հետո վրացական կառավա-

7 Հեղափոխական կոմիտեները Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր—1922 թ. հունվար), Երևան, 1974 թ., էջ 80—83: Տե՛ս նաև ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 290, թ. 2—4:

8 Տե՛ս ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1158, թ. 10, 13:

րությունը պաշտոնապես ինձ տեղեկացրեց, որ սույն ամսի 14-ից հանրապետության երկաթուղային գծերով ազատ տրանզիտի իրավունք է տրամադրում ՌՍՖՆՀ-ին և ԱՍԽՂ-ին դեպի Հայաստան»<sup>9</sup>։

Վրաստանի կողմից Հայաստանի շրջափակման հարցը ՌՍՖՆՂ իշխանությունները շահարկում էին քաղաքական նկատառումներով։ Ինչպես նշում էր Վրաստանի արտգործնախարար Սաբախտարաշվիլին իր հեռագրում՝ Ռուսաստանում Վրաստանի լիազոր ներկայացուցիչ Գ. Մախարաձեին, «մինչև դեկտեմբերի 18-ը, փաստորեն, չի հարուցվել ոչ մի միջնորդութուն դեպի Հայաստան տրանզիտային և, մասնավորապես, պարենային և վառելիքային բեռների անցկացման համար», նման միջնորդութուն ներկայացվեց միայն դեկտեմբերի 18-ին, որն էլ «իսկույնեթ բավարարվեց, սակայն ուղեբեռը... մինչ այժմ չի հասցվել մեր սահմանին»<sup>10</sup>։ Նշենք, որ առաջին օգնությունը Խորհրդային Հայաստան հասավ միայն 1921 թ. հունվարի սկզբին։

1920 թ. դեկտեմբերի կեսերից Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները ուժեղացնում են քաղաքական ճնշումը Վրաստանի վրա։ Դա նշանակում էր, որ Ադրբեյջանի և Հայաստանի խորհրդայնացումից հետո հասել էր նաև Վրաստանի խորհրդայնացման հերթը։ Դրա իրականացումը եզրափակելու էր ամբողջ Անդրկովկասում Խորհրդային կարգեր հաստատելու ՌՍՖՆՂ իշխանությունների քաղաքականությունը։

Դեռ 1920 թ. նոյեմբերի վերջերին, խոսելով Վրաստանի հնարավոր խորհրդայնացման մասին, ՌՍՖՆՂ ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի. Ստալինը Վ. Լենինին և Գ. Զիչերինին հուշում է, որ իր կարծիքով, «տարբերակներից լավագույնը Թուրքիայի հաջող պատերազմն է

<sup>9</sup> Նույն տեղում, թ. 20։

<sup>10</sup> Նույն տեղում, թ. 28։

Վրաստանի հետ, ինչը Ռուսաստանին հնարավորութիւն կտա միջամտել միջնորդի և փրկարարի կեցվածքով»<sup>11</sup>:

Սակայն այս հարցում ոչ բոլորն էին համամիտ Ստալինի հետ: 1920 թ. դեկտեմբերի 3-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ուղղված զեկուցագրում Գ. Չիչերինը նշում է, որ պետք է հետ պահել թուրքերին Վրաստանի վրա հարձակվելուց, «մանավանդ Հայաստանի խորհրդայնացումից հետո: Վերջինս ստիպում է շատ ավելի զգույշ լինել Անտանտի նկատմամբ»<sup>12</sup>: Սրանից մի քանի օր անց, դեկտեմբերի 6-ին, տեղեկանալով այն մասին, որ Կենտկոմը որոշել է խորհրդային միջնորդ Պ. Մդիվանու (Բուդու) միջոցով հայտնել թուրքերին, որ Ռուսաստանը դեմ չի լինի «Ախալցրխայի և Ախալքալաքի գավառներում թուրքերի իշխանության հաստատմանը», Չիչերինը նշում է, որ դա «կնշանակի պատերազմ Թուրքիայի և Վրաստանի միջև, ինչն իր հերթին կհանգեցնի Բաթումի անխուսափելի գրավմանը թուրքերի կողմից»: Խորհրդային Ռուսաստանի արտգործօժողկոմը Կենտկոմի առջև համահորեն պնդում է թույլ շտալ թուրքերին գրավել Բաթումը և «հետաձգել Ախալցխայի և Ախալքալաքի հարցի վերը նշված լուծումը»<sup>13</sup>:

Ինչպես ժամանակին Հայաստանի, այնպես էլ Վրաստանի խորհրդայնացման նախաձեռնութիւնը շտապում է իր ձեռքը վերցնել Բաքվում տեղակայվող ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն Գ. Օրջոնիկիձեի գլխավորութեամբ: 1920 թ. դեկտեմբերի 15-ին Օրջոնիկիձեին ծածկագիր է ուղարկում Մոսկվա՝ Վ. Լենինին, ուր նշում է, որ Կովկասյան բյուրոյի խորհրդակցութիւնը, որին, բացի բյուրոյի անդամներ Ստասովայից, Նարիմանովից, Մդիվանուց և իրենից, ներկա էին նաև էլիավան, Լեզրանը, Ստարկը, Հեկկերը և այլք, «միաձայն և գաղտնի կերպով որոշել է լուսաբացին

11 ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ միկրոժապավենների հավաքածու № 1, գ. 2, թ. 142:

12 Նույն տեղում, գ. 7, թ. 21:

13 Նույն տեղում, թ. 23:

անցնել Վրաստանի սահմանը, ամեն ինչ նախապատրաստված է»<sup>14</sup>։ Սակայն Վ. Լենինը և Ռուսաստանի Ռազմական գործերի ժողկոմ Լ. Տրոցկին զսպում են նրանց, պատասխանելով, որ «դա արմատապես հակասում է Կենտկոմի որոշմանը և կարող է ունենալ ողբերգական հետևանքներ։ Կտրականապես պահանջում ենք դադարեցնել որոշման իրագործումը և շեղյալ հայտարարել այն»։ Այս կարգադրությունն Օրջոնիկիձեի կողմից ընդունվում է ի կատարում<sup>15</sup>։

Սակայն դրանից շատ շանցած, 1921 թ. հունվարի 2-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի անդամներ Գ. Օրջոնիկիձեն և Ս. Կիրովը «Խիստ գաղտնի» զեկուցագիր են ուղարկում ՌԿ(բ)Կ Կենտկոմի բոլոր անդամներին, որում ներկայացնում են Վրաստանի խորհրդայնացման դրդապատճառները և անհրաժեշտությունը։ Ըստ Օրջոնիկիձեի և Կիրովի դրանք էին. Վրաստանը «Կովկասում հանդիսանում է հակահեղափոխության բազա», աջակցելով և կազմակերպելով՝ ապստամբություններ Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում՝ «վարկաբեկում է մեզ մուսուլմանների աչքում», «խորհրդային Հայաստանը առանց խորհրդային Վրաստանի փաստորեն մնում է ավելի շատ Թուրքիայի, քան մեր ազդեցության տակ», «Անդրկովկասում ստեղծված իրադրությունը ստիպում է մեզ Ադրբեջանում պահել շոշափելի ռազմական ուժեր, ինչը ցանկալի չէ բնակչության և վնասակար է զորամիավորումների համար» և այլն։ Օրջոնիկիձեն և Կիրովը հուշում են, որ Վրաստանի խորհրդայնացումով ամուր կպահենք Հյուսիսային Կովկասը և ամբողջ Անդրկովկասը, եթե գրավենք Բաթումը, Անտանտը, որը ներկայումս չունի մեզ դիմակայելու համար բավարար ուժեր, կզրկվի հարավում վերջին հենակետից մեր դեմ։ Վերջում նրանք տեղեկացնում են, որ Վրաստանը ներսից խորհրդայնացնելու հույսեր չկան, որ առանց իրենց օգնության դա

14 Նույն տեղում, գ. 2, թ. 189.

15 Նույն տեղում։

